

20.221

C.1930/1239

ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԴԱԺՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

Հրատարակություն հեղինակի

329.14

Հ - 85

Մ Ո Ս Կ Վ Ա

1929

Անտ Խանիսյան,
Սոսիալական գիտություն.

UAT895

329.14
Σ-85

ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

05 FEB 2007
БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԴԱԶՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ



Հրատարակություն հեղինակի

ՍՈՍԿԱ

1929

13 JUN 2013

АШОТ ИОАННИСИАН

К ПОЛЕМИКЕ О ДАШНАКАХ

Изд. автора



56402-66

Մամուլի եջերից վերջերս հարձակումներ տեղացին իմ դեմ՝ Դաշնակցության սոցիալական ծագման մասին իմ ունեցած գրական մի յեկույթի առիթով: Ներկա բրոշյուրը պատասխանի մի գրություն ե՞ ուղղված հարձակումը նախաձեռնողի՝ ընկ. Գ. Վանանդեցու դեմ: Պատասխանել մյուսներին ավելորդ աշխատանք կլիներ, վորչաի դրանց ասածը ըստ եյության Վանանդեցու տաղտկալի կրկնությունն ե միայն: Գրությունս վերջում միայն հարկ համարեցի կարճ նկատողություններ անել մի յերկու «նոր» առարկությունների շուրջը, վոր արվել են իմ դեմ Վանանդեցուց տնկախ: Ընթերցողը հնար ունի համոզվելու, վոր, դրանց հեղինակներն իսկ խարխալում են գրական նույն այն մակերեվույթի վրա, վորի վրա նպհում ե այնքան արագ Վանանդեցու դյուրամեք գրիչը:

Պարբերական որգաններում տպագրության հանձնելու համար՝ գրվածքիս հիմնական մասը ուղարկել եյի Յերեվան դեռ յեվս անցյալ տարվա մայիսին: Անհայտ պատճառով գրությունս

անտիպ մնաց մինչ այսօր։ Այդ չխանգարեց, վոր մամուլի եջերից մինչ այսօր իսկ շարունակվեյին իմ՝ դեմ յեղած հարձակումները Գ. Վանանդեցու հարթած ուղեգծով։ Նկատելով այս, այլեւ հնար չունենալով պատասխանելու մի առ մի Դաշնակցության շուրջը յեղած տարածայնությունների առթիվ ընկերների տրված մասնավոր հարցումներին՝ նպատակահարմար գտա նրանց ուշադրությանը հանձնելու գրվածքս արանձին բրոշուրով։

1929, հունվար 4.

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

«Նորք»-ի վերջին գրքում լույս ե տեսել իմ՝ «Դաշնակցության սոցիալական բնույթը» ուսումնասիրության մի մասը նվիրված Դաշնակցության մանր-բուրժուական ծագման խնդրին։ Հողվածի անտիպ մնացած շարունակությունը, ինչպես նկատված ե «Նորք»-ի ծանոթության մեջ, պիտի արժարժեք Դաշնակցության սոցիալական եվոլյուցիայի ե ասպ նրա դասակարգային վերասերման խնդիրը։ Չսպասելով սակայն դրան, «Խորհրդային Հայաստան» թերթի 1928 թ. № 94-ում ընկ. Գ. Վանանդեցին շտապել ե տարածել Դաշնակցության ծագման մասին իմ ասածը նրա ամբողջ պատմության վրա ե միաժամանակ հանել շփոթություն ցանոդ յեզրակացություններ այն քաղաքական հետեվանքների մասին, վոր բղխում են իբր թե «Դաշնակցության մանր-բուրժուական (?) տեսությունից»։

Ըստ ելության մոտենալով խնդրին՝ Դաշնակցության դասակարգային բնույթի տեսության, ինչպես նաե դրանից հետևող յեզրակացությունների շուրջը ընկ. Վանանդեցու արած գիտողությունները քննադատության առատ նյութ կարող եյին մատակարարել

իմ գրչին: Դաշնակցության դասակարգային բնույթի պրոբլեմը, ղոդվելով իդեոլոգիական ֆրոնտի հարցերի հետ, կարոտ է, անշուշտ, մարքսիստական-լենինյան ուշադիր լուսաբանության: Այդ չէ՞ն ցույց տալիս արդյոք մտքի եկեղծտիկական այն գոհարները, վոր նույն այդ խնդրի շուրջը առատության յեղջյուրից թափում է ընկ. Վանանդեցին «Ս. Հ.» լայնանիստ հջերի վրա:

Զգում եմ, այնուամենայնիվ, վոր աննպատակահարմար կլինեի փոքրիկ առիթը առանցք դարձնել ծանրակշիւ խնդիրների քննության համար: Ուստի և հետագա իմ նկատողութունները՝ մի կողմ թողնելով Դաշնակցության խնդրի քննությունն ըստ եյուլթյան՝ հետապնդելու յե մի նպատակ միայն. պարզաբանության կարգով հետ մղել անտեղի այն վերագրումներն ու անհիմն այն հետեւությունները, վոր անում է ընկ. Վանանդեցին՝ Դաշնակցության մասին իմ հայտնած կամ չհայտնած կարծիքների առիթով:

I

Իր հոգւածում ընկ. Վանանդեցին պնդում է, վոր Դաշնակցության բնույթի մասին իմ պաշտպանած տեսակետը այլ ինչ չէ, քան ընկ. Շահումյանի՝ բայլեւիկյան տեսակետի «ռեվիզիա»: Սխալ է թե ճիշտ իմ տեսակետը—թողնում եմ մի կողմը: Սակայն «նորք»-ի վերջին գրքում ընդարձակ հատվածներ կան Շահումյանից, վորոնք վկայում են կարծես այն մասին, թե Շահումյանը ևս բնորոշում եր վաղեմի Դաշնակցությանը վորպես բուրժուականության եյուլթյանը հավատարիմ, բուրժուազիայից ազդված ու նրան գործիք ծառայող մանր-բուրժուական «դեմոկրատիայի», մանր-

բուրժուական քաղքենիական մտավորականության կուսակցություն: Գուցե Շահումյանը ևս մոլորվում եր ինձ պես: Գուցե Բայց թե ինչո՞ւ հենց Շահումյանի «ռեվիզիան» է իմ մոլորությունը—դա Վանանդեցու գաղտնիքն է:

Իժվար չե սակայն մերկացնել այդ գաղտնիքը:

Պոսելով Շահումյանի հայացքների մասին, ընկ. Վանանդեցին ևս, ուրիշների որինակով, նկատի ունի 1906 թ. նրա գրած մի հոգւածը, վորտեղ հեղինակը ի ծնե և ի բնե «բուրժուական» է համարում Դաշնակցությունը: Այդ միտքը հաստատող մեջբերումներ անելով Շահումյանի հոգւածից՝ «քննադատները» համառորեն լռում են այն մասին, թե ի՞նչ կապակցությամբ կամ ի՞նչ իմաստով են արված ընկ. Շահումյանի այդ հայտարարությունները: Դրանով նրանք փաստորեն հեղաթյուրում են Շահումյանի միտքը և մոլորեցնում ընթերցողին կամ ունկնդրողին այն ուղղությամբ, վոր իբր Շահումյանն առարկում է հենց նրանց, ովքեր մանր-բուրժուական են համարում Դաշնակցության ծագումը: Իժբախտաբար բանակուլի դյուրին այդ միջոցին է դիմում նաև ընկ. Վանանդեցին:

Շեշտելով Դաշնակցության բուրժուականությունը, նրա ռեակցիոն, ազգայնական բնույթը՝ ընկ. Շահումյանը Դաշնակցության մանր բուրժուականությունը չէ վոր ժխտում եր, այլ նրա՝ «սոցիալիզմը», «աշխատավորականությունը», «հեղափոխական» կուսակցություն լինելու հավանությունը: Կարգացեք Շահումյանի հոգւածն ամբողջովին (և վո՞չ՝ նրա մտքերի ընդհանուր կապակցությունից պոկված մի յերկու ցիտատը), ու ձեզ կպարզվի մի անգամից նրա վորակումների իսկական իմաստը:

«Նա (Դաշնակց.)—գրում եր Շահումյանը. անվանվել և մինչ հիմա «հեղափոխական» կուսակցություն 15 տարվա ընթացքում հեղափոխություն դեմ կռվելու համար. նա կոչվում է հիմա «հեղափոխական» և «սոցիալիստական» կուսակցություն—«հեղափոխություն և սոցիալիզմի դեմ կռվելու համար»: «Իր որդանում նա (Դաշնակցությունը) սկսեց հողավածներ գրել բուրժուազիայի դեմ, միջամտել բանվորների և կապիտալիստների տնտեսական հարաբերություններին, հիմնել բանվորական պրոֆեսիոնալ միություններ և այլն և այլն: Դադարեց նա դրանով լինել բուրժուական, ազգային-քաղաքական, ռեակցիոն կուսակցություն, ինչպիսին նա յեղել է տասնհինգ տարվա ընթացքում: Ավանդ, այդ կուսակցության գործունեությունը մեր աչքի առաջ է, և ներկայիս նա, գուցե, ավելի քան յերբևե և՛ բուրժուական է, և՛ նացիոնալիստական, և՛ ռեակցիոն»*):

Յես վոչ միայն համաձայն եմ Շահումյանի այս վորակումներին, այլ և յեղակետ եմ ընդունել այդ վորակումները «նորք»-ի իմ վերլուծության համար: Միամտություն կլինեի սակայն կարծել, թե այդ վորակումները ժխտում են ինքյան դաշնակցական նացիոնալիզմի, ռեակցիայի, հակաբանվորականության, հակաշխատավորականության մանր-բուրժուական ծագումը: Միթե իրոք «բուրժուական» չե նաև մանր բուրժուազիան: Միթե նացիոնալիզմ, ռեակցիա, հակապրոլետարականություն և այլն հասկացողությունները միշտ և բոլոր պայմաններում անհաշտելի յեն մանր բուրժուազիայի հետ:

*) С. Шаумян. «Статьи и речи», 1924 г. стр. 91.

Ընկ. Վանանդեցին չի փորձում հերքել ընկ. Շահումյանից քաղած իմ այն հատվածները, վորոնք ցույց են տալիս, թե հակասոցիալիստական և այդ իմաստով քաղաքականապես բուրժուական համարելով Դաշնակցությունը, Շահումյանը իմպերիալիստական պատերազմի ժամանակ ու Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո իսկ շարունակում եր մանր-բուրժուական համարել Դաշնակցության սոցիալական նկարագիրը:

Դրա փոխարեն նա անում է նոր մի հայտնագործություն: Այն, վոր Շահումյանի «ռեվիզիան» ձեռնարկել եմ յես Հայաստանի խորհրդայնացումից «մի քանի ժամանակ հետո»—Դ. Անանունի՝ «Ռուսահայերի հասարակական զարգացումը» գրքի յերկրորդ հատորի ներշնչման տակ: Ընկ. Վանանդեցին «ապացուցում» է այդ մեջ բերելով մի նախադասություն Դ. Անանունի այդ գրվածքից, վորը համեմատում է 1921 թ. իմ մի ճառից քաղած մի այլ նախադասության հետ: Իմ նախադասության մեջ ասված է մոտավորապես նույնը ինչ Անանունն է ասում: «Մերկացումը» կատարյալ է:

Սակայն ընկ. Վանանդեցին անում է այդ «մերկացումը» գրական աչքակապության՝ ճանապարհով միայն: Նա թագցնում է ընթերցողից նախ այն հանդամանքը, վոր Դ. Անանունի հատորը լույս է տեսել 1922 թ., մինչդեռ իմ ճառը տպագրված է 1921 թ.: Ըստ Վանանդեցու՝ Շահումյանի «ռեվիզիան» ձեռնարկել եմ իբր թե կուսակցության Կենտկոմի քաղաքական ինչ ինչ սխալներն արդարացնելու մտայնությամբ: Սակայն 1921 թվին վոչ այդ սխալները կային, և վոչ ել դրանց «տեսական արդարացման» հոգսերը: Բայց ընկ. Վանանդեցին լուծության է տալիս ամենազլխավորը—իմ ճառի էությունը: Նա «մերկացնում» է «պաշտ-

պանողական» իմ այն ճառը, վոր արտասանել եմ Կենտրոնի հանձնարարությունը Դաշնակցություն հատի ին սց են իր ով կայի ժամանակ: «Դատապաշտպանի» դերը պարտադրում եր առաջ բերել Դաշնակցության «ողտին» արգումենտներ, վորոնք պետք ե ջրվեյիս «դատավարության» ընթացքում: Այդ նկատառումով յես կազմեցի իմ ճառը, ոգտագործելով Քր. Միքայելյանի, Մ. Վարանդյանի, Գյուտ Աղանյանի և Դ. Անանունի դատողությունները հայկական շարժման և Դաշնակցության մասին: Նման հանգամանքում յես իրավունք ունեյի վոչ միայն կրկնել Դ. Անանունի վորևե ֆրազը, այլ և վերարտադրել իմ ճառի մեջ հայկական շարժման նրա կոնցեպցիան: Չեյի կարող յենթադրել, ի հարկե, վոր տարիներ անցնելուց հետո ընկ. Վանանդեցին իմ անձնական տեսակետի համարժեք պիտի հռչակեր «դատապաշտպանողական» այդ ճառը: Տարրինակ չե՞ յենթադրել, թե յերբ և իցե կարող եյի՝ յես խղճի մտոք, սեփական արգումենտներով ու առարկություններով պաշտպանել իսկապես... Դաշնակցությունը, ունենալ, իրոք, այն կարծիքը, վոր Դաշնակցությունը իր գործունեության համար արժանի յե արդարացման, ներման և այլն... Միթե, հիրավի, չըդիտե ընկ. Վանանդեցին, թե ինչպես են կազմակերպվում, ինչ նպատակ են հետապնդում քաղաքական դատի ինսցենիթովկանները... Բայց յեթե գիտե՞ ի՞նչ ե նրա վարմունքի անունը յեթե վոչ՝ դրական աչքակապություն:

Թվում ե, վոր անձնական իմ տեսակետը Դաշնակցության մասին պարզելու համար ընկ. Վանանդեցին կարող եր նկատի առնել պատասխանատու իմ գրությունները, վորոնք լույս են տեսել Դ. Անանունի

հատորից հետո, նույնպես նաև այն, ինչ լույս ե տեսել այդ հատորից առաջ: Չի կարելի ուրանալ հանրածանոթ ճշմարտությունները: Դաշնակցության մանր բութութեական ծագման տեսությունը բնավ չի փութութում այդ կուսակցության անցյալի կապն և առնչությունը հայ ու ոտար մարտական, կապիտալիստական բութութագիտի հետ: «Հայկական հարցի», հայկական շարժման, հնչակ—դաշնակիզմի անցյալը քննելիս՝ յես իմ գրվածքների ու յելույթների մեջ շարունակ ընդգծել եմ այդ յերևույթների և կազմակերպությունների գաղափարական կամ կազմակերպչական կախումը նվաճողական—իմպերիալիստական Յեվրոպայից, նրանց կապը ազգային տիրող դասակարգերի հետ: Այդ տեսակետից ե, վոր իմ առաջին գրական յելույթից ի վեր, յես—իսկապես, և վոչ կարծիք—ոսվիզիտայի եմ յենթադրում այսպես կոչված հայ ազատագրական շարժումը՝ սկսած հեռավոր միջնադարից մինչև ընթացիկ դարաշրջանը:

Դաշնակցության բութութական կապերի, նրա իմպերիալիստական կախման մասին կան պարզ դիտողություններ 1918 թ. իմ «Դեպքերը Բագվում» բրոշյուրի մեջ: Դաշնակցությունը՝ վորպես կովկասահայ բութութագիտի մարտական կուսակցություն՝ յես բնույթագծել եմ 1924 թ. «Դաշնակցությունը ե պատերազմը» բրոշյուրի մեջ, ինչպս նաև դրանից առաջ ու հետո լույս տեսած իմ հոդվածների կամ ճառերի մեջ: Նույն իմաստով հիշեցումներ կան «Նորք»-ի վերջին գրքում լույս տեսած իմ հոդվածում: Ինչպես դժվար չե տեսնել՝ այդ հոդվածի ու նրա շարունակությունը ընդհանուր բովանդակության ու կառուցվածքի բերումով՝ Դաշնակցությունը վորպես կովկասահայ

մարտական բուրժուազիայի կուսակցությունն պիտի բնորոշվեր հանգամանորեն գրվածքի անտիպ մասում — կուսակցության դասակարգային վերասերման տեսությանը նվիրված բաժնում:

II

Դաշնակցության ծագման մանր-բուրժուական բնույթի մասին իմ արած դիտողությունները տասնամյա անցյալ ունին, բայց միայն հիմա յե, վոր ընկ. Վանանդեցին գլխի յե ընկնում բայլընդմի «ռեվիզիա» հայտնագործելու՝ դրանց մեջ: Քննադատության այս հապաղումը պատահական չե: Դա արդյունք ե նրան, վոր փաստորեն մինչև վերջին ժամանակներս բայլընկեն երի մեջ սկզբունքային տարակարծություններ չկային Դաշնակցության սոցիալական բնույթի տեսության նկատմամբ: Հիրավի: Բաց արեք, որինակ, ընկ. Կասյանի խմբագրությամբ հրատարակվող «Նոր Աշխարհ», 1922, եջ 46—47 և կարդացեք, թե ինչ եր գրում ընկ. Արշավիր Մելիքյանը անցյալ դարավերջի կովկասահայ կուսակցությունների մասին:

«Մինչ իննսունական թվականները մեր հասարակական մտածողության ամենաբնորոշ գիծը կարելի յե համարել ազատամտությունը (լիբերալիզմը) և ինքնագիտակցության յեկող ժողովրդի ազգասիրությունը (պատրիոտիզմը): Այդ լիբերալիզմը դասակարգային դիտակցության արտահայտություն եր հայ վաճառականի, հայ արդյունաբերողի, հայ արդյունադործողի, նրա ազգասիրությունը չեր կրում իր մեջ հեղափոխական տարրեր, նա չեր փորձում դուրս դալ որինականության սահմաններից: Լի-

բերալ ազգասերներն սկսում են լուրջ կերպով մտածել նաև տաճկահայերի մասին, կամենալով ազատագրել նրանց միմիայն ռուսական միապետության դենքի ուժով: հեղափոխական միջոցների մասին նրանք չեն յերազում, վորովհետև հայ լիբերալիզմը իր եյուլթյամբ դեմ եր հեղափոխական մեթոդներին ազգային կամ մի այլ հասարակական խնդրի լուծման գործում: Նա միշտ աշխատել ե գործել իշխանության պաշտպանության և հովանավորության տակ, ուստի ապրատամբական գործը նա խարաղանել ե իբրեւ մի անթույլատրելի ձեռնարկություն, իբրեւ մի անհեղինակ հանցանք: Հայկական ազատամտությունը, իբրեւ արթնացող առևտրա-արդյունագործական բուրժուազիայի գաղափարախոսություն, իշխող և ազդեցիկ եր այն չափով, ինչ չափով դեռ կյանքի չեյին կոչված մյուս դասակարգերը: Վերջիններիս հանդես գալով սկսում ե նսեմանալ միաժամանակ և լիբերալիզմի հմայքը: Իննսունական թվականներին ասպարեզ են իջնում մանր-բուրժուական ազգայնականություն և հեղափոխականության գաղափարախոս կուսակցությունները, վորոնք սկսում են կատաղի կերպով պայքարել նախ սուլթանական, այնուհետև և ցարական կառավարության դեմ: Սակայն շատ շուտով պարզվում ե, վոր մանր-բուրժուական կուսակցություններն ընդունակ են հեղափոխականորեն գործելու միայն ազգայնականության նեղ շրջանակներում, վորից դուրս նրանք կարող են վարել միայն հակահեղափոխական, հակապրոլետարական քաղաքականություն:

Ծառայել ազգային և միջազգային բուրժուազիային, կատարել արևմտյան կապիտալի սպասարկողի դերը—ահա այն վերջին փուլը, վոր անցնում են այդ մանր բուրժուական հեղափոխական կուսակցությունները և գերեզման իջնում»:

Այստեղ մի կողմն եմ թողնում այն, թե վորքան ճիշտ և կամ սխալ՝ բնորոշել դաշնակցականներին կամ հնչակյաններին քաղաքականապես իբրև «ազգային-հեղափոխական» կուսակցություններ: Այս մասին հետո: Արձանագրում եմ միայն այն, վոր հնչակյանների և դաշնակցականների մանր-բուրժուական ծագման մասին ընկ. Կասյանի խմբագրությամբ լույս տեսած որդանը ըստ ելույթյան իմ տեսակետն եր պաշտպանում: Կարող ե սակայն ընկ. Վանանդեցին պնդել, թե Նոր Աշխարհ»-ը կամենում եր դրանով «հաց փախցնել մեր խանութից Դաշնակցության բաժին տալու համար», կամ վոր ընկ. Կասյանի որդանի մտայնությունը պետք ե նկատել «վորպես արգասիք քաղաքական իդեոլոգիական գծում արտահայտվող խոշոր սխալների կամ վորպես այդ սխալների տեսական հիմնավորման անհրաժեշտություն»:

1923 թ., յերբ հրատարակվեց իմ՝ «Դաշնակցության իդեոլոգիայի ընթացիկ կուրսը» հոդվածը, կամ 1928 թ., յերբ լույս տեսավ «Նորք»-ի վերջին գիրքը, վորտեղ տպագրված ե իմ՝ «Դաշնակցության սոցիալական ծագումը»՝ Դաշնակցության անցյալի մասին այլ բան չեմ ասել, քան «Նոր Աշխարհ»-ը: Բաց արեք և կարդացեք հիմա այն, ինչ գրված ե «Նորք»-ում անդրկովկասյան այլ և այլ դասակարգերի՝ դեպի ցարիզմը հայտնաբերած վերաբերմունքի մասին:

«Իր տնտեսական շահերի զարգացմամբ՝ հայ

բուրժուազիան և բուրժուական մտավորականությունը շուտով հաշտվեց ուսացման քաղաքականության հետ, մինչև անգամ ինքը գրավված վերջինովս՝ նպաստում եր սրա կիրառմանը, այն-ինչ վրաց ու թուրք աղնականությունը վոխերիմ թշնամի մնաց: Բուրժուական այլ վերաբերմունք ուներ դեպի ինքնակալության ազգային քաղաքականությունը տեղական մանր բուրժուազիան՝ իր մտավորականներով հանդերձ: Այդ քաղաքականությունը շոշափում եր քաղաքային և գյուղական լայն դեմոկրատիայի ամենազգայուն լարերը: Դեմոկրատիայի և աշխատավոր մտավորականության կենսական շահերը առաջ ելին բերում խոր դժգոհություն ու զայրույթ ուսացման ազգային քաղաքականության դեմ: Հայ բուրժուազիայի ազդեցությամբ հայ դեմոկրատիայի կուսակցությունը՝ հանձին Հ. Հ. Դաշնակցության համբերատար եր ընդհանուր առմամբ և մինչև անգամ անտարբեր դեպի ինքնակալության սոցիալական քաղաքականությունը, մանավանդ վոր այդ կուսակցության idee-նք-ը կազմում եր «անդր»-Հայաստանը: Բայց դրա փոխարեն նա ակտիվ կերպով բացասաբար եր վերաբերվում նրա ազգային քաղաքականությանը. Այլ եր վրաց դեմոկրատիայի կուսակցության վերաբերմունքը դեպի ուսացման քաղաքականությունը: Նա՝ հանձինս մենշևիկների՝ սկզբունքով եր թշնամի դեպի այն: Նա հատուկ կոչվ չեւ մղում դրա դեմ, այլ հույս ուներ ինքնակալության դեմ մղած իր ակտիվ դասակարգային կռիվ վերջ

տալ նրա աղագային քաղաքականությունը»:

Այս հատվածի մեջ, ինչպես տեսնում եք, հայ բուրժուազիան և վրաց ու թուրք ազնվականությունը դատված են վրաց և հայ մանր բուրժուազիայից ու նրա կուսակցություններից — մենշևիկներից և դաշնակներից: Բայց վորովհետև այդ մտքերը ձևակերպում և այստեղ «Նորք»-ը՝ ընկ. Վանանդեցին պիտի բացականչե դարձյալ, վոր բերված հատվածի մեջ ընկ. Հովհաննիսյանը «սպեցիֆիկյան ռեվոլյույի» յե յենթարկում բայլճեիկյան տեսակետը, վոր հատվածի մեջ ձևակերպված մտքերով սպեցիֆիկմը աշխատում և «հաց փախցնել մեր խանութից Դաշնակցության բաժին տալու համար»: «Ռեվոլյույի» և «սպեցիֆիկմ» — դուցե — բայց, իմացեք, ընկ. Վանանդեցի, վոր «ռեվոլյույի» և «հաց փախցնողը» այս անգամ յես չեմ, այլ հինավուրց մի սպեցիֆիկ... ընկ. Կասյանը: Բերելով վերի հատվածը, յես մոռացա հիշատակել, վոր այն քաղում եմ ընկ. Կասյանի «Նորք»-ում տպված մի հոդվածից...*):

Դաշնակցության մասին իմ գրածը հերքելու համար ընկ. Վանանդեցին հարկադրված պիտի լինի նախապես ռեվոլյույի յենթարկելու ընկ. Կասյանին: Բայց ի՞նչու միայն ընկեր Կասյանին. Մի՞թե վրաց մենշևիկմի և հայ Դաշնակցության դասակարգային հարադատության մասին ընկ. Կասյանի գրածը Շահումյանի կրկնությունը չե: Մի՞թե ընկ. Շահումյանը չեր, վոր անգամ 1917 թ. «վրաց մանր-բուրժուական աղագային կուսակցությունը» մենշևիկմը — Դաշնակցության հետ եր համեմատում**): Կամ մի՞-

*) Տես «Նորք» 1923 թ. № 3, էջ 131.

**) Статьи и речи, стр 105.

56402-66

թե նույն ընկ. Շահումյանը չեր, վոր 1918 թ. մերկացնում եր դաշնակցականների «մանր-բուրժուական յերկշտությունը» կոչ եր անում Անդրկովկասի հայ, թուրք և վրացի դյուղացիությանը՝ չլսել այլևս իրենց վաղեմի առաջնորդներին, իրենց շահերին դավաճանած դաշնակցականներին, մենշևիկներին և մուսավթականներին: Վերջապես նույն Շահումյանը չէր, վոր բնորոշում եր անդրկովկասյան սեյմի իշխանությունը, վորպես՝ յերեք ազգություն «ազնվական և մանր-բուրժուական կուսակցությունների» իշխանություն: Սեյմում իշխող կուսակցությունների շարքում հայ «ազգությունը» ներկայացնում եր Դաշնակցությունը: Սակայն ընկ. Շահումյանի բնորոշման մեջ վոչ մի խոսք «բուրժուական» կուսակցության մասին: Ակներե չէ, վոր այս դեպքում ևս Դաշնակցությունը դասվում եր սեյմի «մանր-բուրժուական» կուսակցությունների շարքում *): Չեմ ուզում նորից մեջ բերել «Նորք»-ում հիշատակված Շահումյանի այն հատվածները, վորտեղ նա ուղղակի մասնը բուրժուական և հռչակում Դաշնակցությունը:

Պարզ չէ, վոր Վանանդեցին և իր հետևորդներն են հենց, վոր ռեվոլյույ յեն կատարում Շահումյանի այդ մտքերի ու հայտարարությունների նկատմամբ ընկ. Վանանդեցին թերևս «լյապուստ» կամ «թյուրիմացություն» համարի Շահումյանի նման մեղքերն ու դիտողությունները: Բայց նկատեցեք, վոր Շահումյանի կամ ուրիշների Դաշնակցության անցյալին վերաբերող այդ հայտարարությունները յեղակի կամ պատահական չեն բայլճեիկյան գրականության մեջ: 1918 թ. ընկ. Ստալինը, հարկադրով դաշնակցա-

*) Նույն տեղ, էջ 133 և 140:

կաններին ուսուսանողներին հետ, վերակում է դրանց յերկուսին «նարոդնիկական ֆրակցիաներ» «նարոդնիկական կուսակցություններ» բառերով: Նույն տարվա հուլիսի 29-ին, Խորհուրդների Համառուսական Կենտրոնի միջոցով նիստին արտասանած ճառի մեջ, ընկ. Լենինը, համեմատելով դաշնակցականներին մենշևիկ-սոցիալական ֆրակցիաների հետ, շեշտում էր, վոր «անգլո-ֆրանսիական իմպերիալիզմը Բազմում գերակշռող ուժ ստացավ շնորհիվ իր ահագին մեծամասնությունը մեր դեմ նրանց կողմն անցած Դաշնակցության, հայկական կիսաանցիլիստական կուսակցության, ինչպես դուք այդ շարունակ տեսնում եք մեր ֆրակցիաների մեջ, վորոնք սոցիալիստներ անվանելով իրենց, յերբեք չենին կտրել իրենց կապը բուրժուազիայի հետ»*):

Ավելի վաղ՝ Լենինը «ձախ նարոդնիկական ուղղություն մանր-բուրժուական ազգային կուսակցություն» եր համարում Դաշնակցությունը**): «Թյուրիմացություն» կամ «լյապուս չեր, յերբ քննելով յերկրորդ Դոմայում դաշնակցական պատգամավորների— Սաղաթեյանի և Տեր-Ավետիքյանի ազդարարյին պահանջը... եսերներին տեսակետին հարող գյուղացիների ներկայացուցիչներ և հայտարարում նրանց***): Արդյոք սպեցիֆիկյան աջ թեքում կամ գեթ՝ «թեքման տենդենց» չկամր այդ հայտարարության մեջ: Թող պատասխանե այդ հարցին, առանց թուք կուլ տալու, ընկ. Վանանդեցին կամ նա, ով համամիտ է նրան:

Դաշնակցությունը կուկասահայ ազգայնական, մանր-բուրժուական կուսակցություն է. «սպեցիֆիկյան» նման հայտարարություններից՝ քաղված բայլեկիյան

*) Ленин, XV стр. 363.

**) Ленин, XIX, стр. 86.

***) Հմ. Собр. соч. IX стр. 603.

հրատարակությունների եջերից, ժողովների, կոնֆերանսների ու համագումարների արձանագրություններից և այլն կարելի յեր կաղմել ընդարձակ մի գիրք: Դաշնակցության մանր-բուրժուական անցյալի մասին չե, որինակ, վոր ընկ. Ս. Սանոյանի բերանով վկայում է Ռկոյի 25-ամյակի առթիվ՝ Անդրյերկոմի հրատարակած քրեստոմատիան՝ «Դաշնակցությունը մանր-բուրժուական նացիոնալիզմի տիպական հոսանքներից տիպականն է՝ անակղրունք, անդեկ ու անառագաստ, անգույն, անդեմ, ամեն անպետքության սուղոգատ, աղմկարար, պարծենկոտ»*):

Կամ կարդացեք Լենինի վերջին հրատարակության VII հատորի ծանոթությունը Դաշնակցության մասին՝ «Մանր-բուրժուական խիստ ազգայնական կուսակցություն, վորը 1903 թվականից գործում է վորպես անլեգալ կուսակցություն... ընդունում եր տերրոր և մոտ եր ուսուսանողներին»**):

Հեղինակությունների յերկար այս շարքը կարելի յեր գոցել հիշատակելով մի վերջին, Վանանդեցու համար թերևս ամենից հեղինակավորին՝ հենց իրան, ընկ. Վանանդեցուն. «Մ. Սարյան, Յեդ. Չարենց» վերնագիրը կրող բրոշյուրի մեջ ընկ. Վանանդեցին, խոսելով Չարենցի մի գրվածքի մասին, ընդգծում է նրա մի արժանիքը, այն, վոր հեղինակը «մերկացնում է հայ մեղանիզմի՝ մանր և միջին բուրժուազիայի և նրա կուսակցության, Դաշնակցության սոցիալական արմատները»... Ըստ յերևույթին, ընկ. Վանանդեցին հիմա յե

*) «25 лет борьбы за социализм». Изд. под ред. М. Орехелашвили. М. Окуджава, С. Такоева. С. Касьяна и А. Эсена. Тифлис, 1923 г. стр. 235.

**) В. И. Ленин, Собр. соч. изд. второе, под ред. Бухарина, Молотова, и Скворцов-Степанова. Москва, 1928 г. стр. 468.

միայն, վոր կամենում և մոռացության տալ Դաշնակցության համար մեր խանութից հաց թուցնելու «սպեցիֆիկյան» իր հին արհեստը, քանի վոր ձեռնտու չե համարել հաղորդակից դառնալու բարեկեցության ավելի ապահով յեղանակներով իրան հրամցնվող գաղափարախոսական ամենորյա վոսպաճաշին... Սակայն չի՞ թելադրում ընկ. Վանանդեցուն թեկուզ հենց իր իսկ անձնական սպահովության բնագոյը՝ հաց թուցնելու արհեստի հետ մեկտեղ դեն շարտելու նաև դրական աչքակապության արհեստը... Կարող և, հիրավի, պատահել, վոր բայլչեիկները և դրանց թվում նաև Վանանդեցու վաղեմի տեսակետը սխալ և յեղել Դաշնակցության անցյալի նկատմամբ։ Կարող և պատահել, չենք վիճում։ Բայց այս նշանակում և միայն, վոր անհրաժեշտ և վերաքննել այդ տեսակետը, ուսումնասիրել հարցն ըստ ելության։ Այս կնշանակիր սակայն պահանջել, վոր բայլչեիկները վերաքննեն իրենց այդ տեսակետը, բայց չբամբասել, թե այդ տեսակետը վերաքննում և բայլչեիկներին։ Դժբախտաբար ինքը Վանանդեցին նպատակահարմար և համարել ընթանալու բամբասանքի ուղիով։

III

Վեճի առարկա դարձած խնդրում բայլչեիզմի և սպեցիֆիզմի տարակարծությունը, ինչպես դժվար չե յեղրակացնել վերը բերած հատվածներից, Դաշնակցության անցյալի մանր-բուրժուական բնույթը չե ինքյան։ Ինքը ընկ. Վանանդեցին հիշեցնում և այն մասին, վոր մի ժամանակ սպեցիֆիկ Դ. Անանունը հայ ազգայնական շարժման մասին ունեցել և Վանանդեցու

այսորվա տեսակետը. հանգամանք, վոր ընավ չե նշանակում, թե Դ. Անանունը կանգնած և յեղել բայլչեիկյան տեսակետի վրա։ Դ. Անանունի միտքը իր «լավ» որերին իսկ տնաբույս ելեկտիզմից դենը չե թափանցել։ Նկատենք նաև, վոր մենչեիկներին շատերը կովկասահայ առևտրա-արդյունաբերական բուրժուազիայի կուսակցություն են համարել Դաշնակցությունը սկզբից և յեթ։ Կարգացեք թեկուզ Ժողովանիայի ու նրա վաղեմի բարեկամների Դաշնակցության բնույթագրմանը նվիրված ճառերն ու հոդվածները։ Բայց խանդարե՞լ և այս, վոր նույն այս մարդիկ համաձայնողական-ապորտյունիստական վարքագիծ ունենանային Դաշնակցության վերաբերմամբ համերկրային կամ ազգային հիմնարկների ներսում։

Մենչեիզմի և բայլչեիզմի, բայլչեիզմի և սպեցիֆիզմի տարակարծության եյական կողմը ներկա հարցում կովկասահայ մանր բուրժուազիայի և հայ ու ոտար խոշոր կապիտալիստական բուրժուազիայի փոխհարաբերության խնդիրն և։ Հիմնականը այդ դասակարգերի հասարակական-քաղաքական հարաբերությունները ըմբռնման ու դրանից բխող վերաբերմունքի խնդիրն և։

Սպեցիֆիզմի և մենչեիզմի բնորոշ կողմերից մեկն եր՝ դատել մանր կամ խոշոր բուրժուազիայի մասին տարածությունից և ժամանակից դուրս, դիտել այդ դասակարգերը վերացականորեն, վորպես անփոփոխ, անանց կատեգորիաներ։ Վոչ մի տարբերություն բուրժուազիայի առանձին գրուպպաների—գաղութային կամ յերկրային—նրա առանձին շերտերի՝ առևտրական կամ արդյունաբերական-ֆինանսականի միջև։ Վոչ մի զանազանություն մանր բուրժուազիայի զարգացման

հասարակների, նրա տարբեր միտվածությունների, որի-
յենտացիաների միջև:

Մենչևիկովի համար բնորոշ էր կովկասահայ մանր
բուրժուական միջավայրի անտեսումը: Այստեղից էր
առաջ գալիս նաև նրա վերացական թեորիան Դաշնակ-
ցության բուրժուական բնույթի մասին: Բնորոշ է,
վոր մենչևիկներից վոմանք մեր շարքերն անցնելուց
հետո իսկ շարունակում են համառել իրենց այդ
տեսակետի վրա. հին տեսությունն ավելացնում են
վոլգար մի միտք միայն, այն, վոր Դաշնակցությունը
մեղանում սկզբից և յեթ (sic!) ֆաշիստական
կադմակերպություն է յեղել: Ֆաշիզմ, վոր ծնունդ
է առնում Հայաստան աշխարհում փրկչական 1890—
1892 թվականներին: Այս անհեթեթությունը հեղնաճ
և ֆաշիզմի բայլելիկյան տեսություն հասցեյին: Դուրս
է գալիս, վոր պրոլետարիատի հեղափոխություն դեմ
ուղղված իմպերիալիստական ռեակցիան բուրժուազիայի
ֆաշիստական դիկտատուրան, ավելի վաղ է ծնվել, քան
ինքը ժամանակակից իմպերիալիզմն ու նրա ծոցում
ծավալվող ընդհանուր հեղափոխական ճգնաժամը...

Սպեցիֆիզմը, ընդհակառակը, դիտում էր կովկա-
սահայ մանր-բուրժուական իրականությունը վորպես
գոց մի միջավայր, վորպես «ուրույն», «սպեցիֆիկ»
մի մեծություն: Այստեղից է հետևում նաև նրա թեո-
րիան Դաշնակցության ինքնամիտի մանր-բուրժուա-
կանության մասին: Այն հանգամանքից, վոր անցյալ
դարի 80—90-ական թվականներին կովկասահայ մանր
բուրժուազիան անմիջորեն չէր յենթարկվում վոչ
ցարիզմի և վոչ էլ արդյունաբերական-ֆինան-
սական բուրժուազիայի դիրեկտիվներին՝ սպեցիֆիկ-
ները իրավունք էյին համարում չեզրակացնելու, վոր

մանր բուրժուազիան զերծ և առհասարակ խոշոր
բուրժուազիայի ազդեցությունից, «շուկաներ նվաճե-
լու մարմաջից»: Ներկա դեպքում՝ յեղելով մանր բուր-
ժուազիայի «ուրույնություն» ֆիկցիայից՝ սպեցիֆիզմը
անտեսում էր կովկասահայ խոշոր առևտրական
բուրժուազիայի դոյությունը, համարում սրան
լոկ մանր բուրժուազիայի մի հատված:

Միանգամայն հակառակ ծայրից էյին մոտենում
խնդրին բայլելիկները: Նրանց կարծիքով մանր
բուրժուազիան չունի և չի կարող ունենալ տնտե-
սապես ինքնանփոփ գոյություն և քաղաքական ուրույն
վարքագիծ: Մանր բուրժուական՝ գրում է Լենինը—
գտնվում է տնտեսական այնպիսի վիճակում, նրա
կենսական պայմանները դասավորված են այնպես,
վոր նա չի կարող չխաբվել. ակամայից և անխուսա-
վորեն նա ձգտում է մերթ դեպի բուրժուազիան,
մերթ դեպի պրոլետարիատը: Ուրույն «դիծ» նա
տնտեսապես անկարող է ունենալ: Նրա անցյալը
մղում է դեպի բուրժուազիան, նրա ապագան՝ դեպի
պրոլետարիատը: Նրա դատողությունը հակվում դեպի
վերջինս, նրա նախապաշարումը (ըստ Մարքսի հայտա-
րարության) դեպի առաջինը*):

Դաշնակցությունը վորպես մանր բուրժուազիայի
կուսակցություն անցյալում՝ գտնվել է շարունակ
կովկասահայ առևտրական, ավելի ուշ՝ արդյունաբերա-
կան-ֆինանսական բուրժուազիայի ազդեցության, նրա
գաղափարական գերիշխանության ներքո: Մանր-բուր-
ժուական միջավայրում Դաշնակցությունը հանդես է
յեկել վորպես նրա բուրժուական որիյենտացիայի կու-
սակցություն: Ընդհանրացնելով այս դրությունը,

*) Ленин XIV ч. II стр. 24.

բայլընկերները համարել են Դաշնակցությունը պիտու-
լից գործիք խոշոր առևտրա-արդյունաբերական բուր-
ժուազիայի և նրան հովանավորող իմպերիալիստական
ուժերի ձեռքին: Դաշնակցությունը այդ ըմբռնումով
քաղքենի միջավայրից առաջ քաշված մանր-բուրժուա-
կան մտավորականության այն «յերբորդ ույժն» էր,
վորի միջոցով մարտական բուրժուազիան միացնում
էր մանր բուրժուազիայի ցած ու ցրիվ ուժերը: Ձեռն-
տեղով Դաշնակցության մանր-բուրժուական ծագումը,
նրա մանր-բուրժուական անցյալը, բայլընկերներն այս
իմաստով է, վոր կովկասահայ մարտական բուրժուա-
զիայի կուսակցությունն են համարել Դաշնակցություն-
նը: Հետևողական բայլընկերվ յերբեք չի
հակադրել Դաշնակցության մանր-բուր-
ժուական բնույթը նրա՝ մարտական բուր-
ժուազիայի նպատակներին ծառայելու
հանգամանքին:

IV

Քննադատության նյութ դարձնելով իմ այն միտ-
քը, թե անցյալում Դաշնակցությունը կովկասահայ
մանր բուրժուազիայի դրոշակակիրը, նրա շահերի ու
մտայնության «հետևողական արտահայտիչն» է յեղել,
ընկ. Վանանդեցին ընկնում է տարակուսանքների մեջ:
Ինչպե՞ս կարելի յե մանր-բուրժուական շահերի հետե-
վողական արտահայտիչ համարել Դաշնակցությունը,
յերբ հայտնի յե, վոր նա միայն վնասակար է լե-
ղել մանր բուրժուազիային և յերբ վերջինս ողտազործ-
վել է շարունակ միայն վորպես միջոց բուրժուա-
կան նպատակների համար: Յեւ ապա, քարը գլուխը,

մտածում և Վանանդեցին, յեթե մանր բուրժուա առե-
լով նկատի ունենայինք միայն քաղքենի խանութպան-
ներին ու մանր առևտրականներին: Սակայն չե՞ վոր
մանր բուրժուա յե նաև գյուղացին, և չե՞ վոր գյու-
ղացիական շահերի «հետևողական պաշտպան» է միայն
պորոլետարիատը և նրա կուսակցությունը:

Վանանդեցու տարակուսանքների աղբյուրն այն է,
վոր նա շփոթում է դասակարգի սուբյեկտիվ ձգտում-
ները նրա որքեկտիվ կացության հետ, նրա հետամտած
նպատակները—ստացած արդյունքների հետ, և ապա
այն, վոր ընկ. Վանանդեցին դատում է հասարակական
դասակարգի մասին ամենուրեք միայն վերացականորեն,
անգիտանալով այն վորպես պատմական կատեգորիա,
վորպես ժամանակի և միջավայրի կոնկրետ արտահայ-
տություն:

Խոսելով Դաշնակցության անցյալի մասին՝ մենք
աչքի առաջ ունինք կովկասահայ մանր բուրժուազիա-
յի վորոշ, իշխող, տարրերը, դիտում ենք այդ տարրերը
իրանց զարգացման այն ժամանակաշրջանում, յերբ
մանր բուրժուան, գյուղացին որքեկտիվորեն կախում
ունենր կապիտալիստական դասակարգից, գտնվում էր
այնպիսի վիճակում, վոր չեր կարող չխաբվել դասակար-
գորեն տիրապետող բուրժուազիայից, յերբ նա՝ շահերի
ուրույն դասավորությամբ՝ «մղվում էր» դեպի բուրժու-
ազիան, յենթարկվում նրա ազդեցության: Անշուշտ, մի-
այն պորոլետարիատն ու իր կուսակցությունն էր, վոր ող-
նեցին գյուղացուն, ազատագրեցին նրան ցարիզմի
հալածանքներից, կալվածատերերի շահագործումից,
բուրժուազիայի քաղաքական շահատակումներից: Պոր-
լետարիատն էր, անշուշտ և իր կուսակցությունը, վոր
պայքար սկսեց նրա վրա ծանրացող անցյալի նախա-

պաշարումներին, հայ և ոտար բուրժուական խաբխիումներին դեմ: Բայց մի՞թե հնարավոր է ժխտել այն փաստը, Վոր դրանով պրոլետարիատը գալիս եր ընդառաջելու միայն մանր բուրժուազիայի, գյուղացիության, հեղափոխական տարրերին, նրանց առաջավոր շահերին, նրանց ապագային: Այս չի նշանակում, թե պրոլետարիատը դառնում եր մանր բուրժուազիայի դասակարգային կուսակցություն, նրա շահերի և մտայնության «հետևողական արտահայտիչ»: Պրոլետարիատը և իր կուսակցությունը սրանով միայն դաշնակցի պարտավորությունն եյին կատարում մանր բուրժուազիայի հալածվող կամ շահագործվող տարրերի, նրա աշխատավոր, առաջագնաց շերտերի վերաբմամբ: Վանելով բուրժուազիայի ազդեցությունը մանր բուրժուազիայից, գյուղացիությունից՝ պրոլետարիատը վերացնում է միաժամանակ նաև մանր բուրժուազիայի ռեակցիոն, հակահեղափոխական միտվածությունը, որիցնտացիան դեպի բուրժուազիան:

«Պրոլետարիատը չի կարող և չպետք է ընդհանրապես ասած, ստանձնե մանր տնտեսատեր դասակարգի շահերի պաշտպանությունը, նա միայն կարող է պաշտպանել նրան այնչափ, Վորչափ այն (մանր տնտեսատերերի դասակարգը. Ա. Հ.) հեղափոխական է»^{*)}:

Պարզ է, Վոր այնչափ, Վորչափ մանր տնտեսատերերի դասակարգը ասպարեղ չեր իջել տակավին Վորպես հեղափոխական գործոն, Վորչափ մանր բուրժուան, գյուղացին, իր շահերի մղումով իր նախապաշարումներով, դեգերում եր տակավին բուրժուազիայի խնամակալության ներքո, նրան առաջնորդ կարող եյին լինել

միայն նրա դեպի բուրժուազիան մղվող, տարրերը, նրա բուրժուական որիցնտացիայի կուսակցությունները, ներկա դեպքում առաջին հերթին՝ Դաշնակցությունը: Կա՞ արդյոք տարակուսանքի առիթ այս խնդրում: Յեվ ակներև չի միթե, Վոր մանր-բուրժուական շահերի «հետևողական արտահայտիչ» եմ համարել յես Դաշնակցությունը այն իմաստով միայն, Վոր Դաշնակցությունը հետեվողական կերպով արտահայտել է կովկասահայ մանր բուրժուազիայի յերբեմնի ազգայնական-իմպերիալիստական որիցնտացիան—կամ այլ խոսքով՝ նացիոնալիստական-իմպերիալիստական բուրժուազիայի ազդեցությունը մանր-բուրժուական այդ միջավայրում:

Այս պնդումը կարելի էլինեք հերքել, յեթե սխալ լինեք մարքսիզմի ուսմունքը մանր բուրժուազիայի պատմական յերբրումներին մասին, յեթե ընդունեյինք, Վոր մանր բուրժուազիան բոլոր պայմաններում հակված է յեղել պրոլետարիատի և իր կուսակցության կողմը, Վոր, մասնավորապես, կովկասահայ մանր-բուրժուազիայի, գյուղացիության, անցյալը դերծ է յեղել ազգայնական նախապաշարումներից, սեփական շահերի պաշտպանությունը ազգայնական բուրժուազիային հանձնելու մտայնությունից: Բնորոշ է, Վոր ընկ. Վանանդեցին այդպես էլ անում է: Անգիտանալով մարքսիզմի ուսմունքը մանր-բուրժուազիայի մասին, Դաշնակցության մասին, իմ ասածը ջրելու համար՝ նա հարկադրված է ժխտել միաժամանակ կովկասահայ մանր բուրժուազիայի հանրաժանոթ անցյալը, իդեալականացնել մանր-բուրժուազիան ու նրա անցյալը հրամցնել Վորպես արատներից դերծ մի պատմություն:

^{*)} Ленин, Собр. соч. изд. второе II т. стр. 522.

«Ընկ. Հովհաննիսյանը՝ գրում է Վանանդեցին՝ վոչնչով չի ապացուցում, վոր կովկասահայ մանր բուրժուազիան յերազել է Թյուրքահայաստանի մասին»։ Թյուրքահայաստանի յերազը մարտական բուրժուազիայի իշխող, հրահրող, ղեկավարող գաղափարն է յեղել տասնամյակներ ընթացքում։ Կարո՞ղ եր մանր բուրժուազիան ազատ լինել այդ գաղափարի տիրական ազդեցությունից։ Կարո՞ղ եր մանր բուրժուազիան մի ժամանակաշրջանում, յերբ տիրում եր բուրժուական այդ գաղափարախոսությունը անկախ լինել վերջինից, չտարվել քաղաքական յերազխաբությամբ, ունենալ իր «ուրույն» քաղաքական գիծը։ Ընկ. Վանանդեցին ըստ յերևութին դրական պատասխան է տալիս այս հարցերին։ Իայց չի՞ նշանակում այս, թե նա այդպիսով կանգնում է յերկու վտարվ հենց վերը բնութագրած սպեցիֆիստական տեսակետի վրա։ Արդյոք հենց այդ տեսակետից չե՞, վոր ներկա դեպքւմ ունի վրիճիայի յե յենթարկում նա մարքսիզմի ուսմունքը մանր բուրժուազիայի և մանր-բուրժուական կուսակցությունների մասին։

«Յերեսուն տարվա գործող հայ բուրժուական ազգայնական շարժումը խաղացել է հայ ժողովրդի, հայ գյուղացիության կյանքի և ֆիզիքական գոյության հետ, զոհելով նրա մեծագույն դանդաճները այն ջարդերին, կոտորածներին, վոր տեղի ունեցան Տոճկահայաստանում, Ռուսաստանում, դաշնակցական Հայաստանում և վորի հետևանքով հայ աշխատավոր մանր բուրժուազիան, գյուղացիությունը (բոլոր ընդգծումները իմն են. Ա. Հ.) մատնվեց գաղթականության, չտեսնված զրկանքներին, տառապանքի

միմիայն նրա համար, վոր ազգայնական կուսակցությունները, դարձնելով նրան թնդանոթի միս, ձգտում եյին ստեղծել մի Հայաստան, ուր այդ նույն աշխատավոր սեփականատեր խավերը պետք է անխնայորեն շահագործվեյին կապիտալիստական ուժերի կողմից»*)։

Ընկ. Վանանդեցու՝ «Բաֆֆու վեպերը» աշխատությունից քաղած այս հատվածը չափազանց բնորոշ է նրա՝ «աշխատավոր մանր բուրժուազիայի» մասին ունեցած գաղափարի տեսակետից։ Վոր յերեսուն տարվա ընթացքում հայ մանր բուրժուազիան թնդանոթի միս եր դարձել հայ և ոտար բուրժուական խմպերիախտական նպատակների համար, ժխտել կարող են այսոր միայն դաշնակներն ու նրանց ուղեկիցները։ Բայց կարո՞ղ եր մանր բուրժուազիան թնդանոթի միս դառնալ, յեթե չենթարկվեր թնդանոթաձիգ բուրժուազիայի ազդեցությանն ու ներշնչումներին և միաժամանակ պատրանք չունենար նրա հետապնդած նպատակների վերաբերմամբ։

Չենք կարող այստեղ թվել մի առ մի պատմական այն աղբյուրները, վորոնք կհերքեյին ընկ. Վանանդեցու պատկերացումը մանր բուրժուազիայի՝ հայկական շարժման մեջ ունեցած մասնակցության մասին։ Թող ներվի մեզ բավականանալու այսպիսի մեկ հատիկ վրայությամբ։ Այդ վիպիությունը քաղում ենք Գ. Ղարաջանի հիշողություններից, վորոնց ճշմարտախոսությանը վստահելով, ընկ. Վանանդեցին ինքն է միջանի անգամ մեջբերումներ անում Բաֆֆու վեպերին նվիրված իր գրվածքում։

«90-ական թվականները—գրում է Ղարաջա-

*) Գ. Վանանդեցի «Բաֆֆու վեպերը» Յերեսն, 1928, էջ 191։

նը.—հայկական նաղթողները հաղթական շըր-
ջանը պետք է համարել: Հնչակյանությունը և
մանավանդ դաշնակցականությունն էլ տեղ չեյին
թողել: Դժվար եր լինում թափանցել մասսաների
մեջ առանց հանդիպելու մեծամեծ, նույնիսկ ան-
հաղթելի, խոչնդոտների: Յեղեկ են մոմենտներ
այդ թվականներին և թե ավելի ուշ, յերբ ուս-
տանական սահմանագլխի հայարնակ մասերում
հայ գյուղացիք ամբողջ համայնքներով դադա-
րեցրել են իրենց վար ու ցանքսը այն հույսով,
վոր այսօր վաղը ազատություն է լինելու Հա-
յաստանում և իրանք պիտի դադթեն վերջա-
պես իրենց յերջանկությունը գտնելու հայրենի
«ազատ յերկրում»*):

Թյուրքահայաստանի յերազը, «ազատ յերկրի»
պատրանքը, անժխտելի յե, ըստ յերևույթին: Այն չի
կարելի անտեսել, հարկավոր է միայն հառկանալ, բա-
ցատրել: Սակայն, անկասկած, անհասկանալի, անբա-
ցատրելի կմնա մանր բուրժուազիայի այդ պատրանքը,
յեթե մեկնակետ ունենանք Վանանդեցու տեսակետը
իրա՝ մանր բուրժուազիայի մասին: Բացատրել յերե-
վույթը չի կարելի, յեթե յեկակեա ունենանք լոկ բուր-
ժուազիայի մեքենական ազդեցությունը մանր բուր-
ժուազիայի վրա: Զի կարելի նաեւ բացատրել Դաշնակ-
ցության՝ մանր բուրժուազիայի վրա ունեցած ազդե-
ցությունը նշելով միայն վերջինիս հետամնացությու-
նը, տգիտությունը, անհեռատեսությունը: Լոկ բան-
վորական մասսաների նախապաշարունակներով չե, վոր
բացատրում ենք վերջին հաշիվով ուփորմիղմի յերևույ-

*) Գ. Ղարաբյան, «Անցյալի հիշողություններից», Թիֆլիս,
1918 թ. էջ 48:

թը, նրա ազդեցությունը կապիտալիստական յերկը-
ների բանվորական շարժման վրա: Նույնպես մանր
բուրժուազիայի նախապաշարունակներով չե, վոր պետք
է պատճառաբանենք նրա մղումը դեպի բուրժուազիան,
նաղթողներին կուսակցությունների գերազանցող
ազդեցությունը մանր բուրժուազիայի, նրա հասարա-
կական-քաղաքական շարժումների վրա: Բուրժուազիա-
յի և նրա կուսակցությունների ազդեցությունը ան-
հնարին կլինեն, յեթե ինքը ազդվողը հասունացած
միջավայր չլինել աչն դորժոն կերպով ընդունե-
լու համար: Ազդեցության գործոն այդ ընկալումը
ներկա դեպքում պատահական չեր բնավ, այլ բխում
եր մանր բուրժուազիայի որդեկտիվ կացությունից,
նրա բուրժուական եյությունից:

V

Ինչպես նշում են «Բաֆֆիի վեպերից» վերը բերած
հատվածում իմ արած ընդգծումները, ընկ. Վա-
նանդեցին խոսում է շարունակ «աշխատավոր մանր
բուրժուազիայի», գյուղացիության «աշխատավոր մա-
նրը սեփականատեր» խավերի մասին: Նույն կերպ
վարվում է ընկ Վանանդեցին նաեւ «Խ. Հ.» մեջ՝ մեզ
վրադեցնող հոդվածում: Այստեղ ևս մանր բուրժուա-
զիան նրա համար սոսկ «հարստահարվող», «շահա-
գործվող» և բոլոր պայմաններում «հեղափոխական»
տարր է: Սակայն նարողնիկական վաղեմի մտա-
յություն չէ՞ նկատել մանր բուրժուազիան, մանր աշ-
րանքարտադրողը, մանր առևտրականն ու արդյունա-
բերողը, գյուղացիությունն ու արհեստավորությունը
վորպես «շուկայի մարմալից», կապիտալիստական
մղումներից զերծ հասարակական կատեգորիա: Յեւ այդ

մի ժամանակաշրջանում, յերբ տիրում ու թեկադրում էյին կապիտալիստական արտադրական հարաբերությունները, իշխում շուկայի որենքները:

«Կապիտալիզմը ծնվել է և շարունակ ծնվում է մանր արտադրությունից—նկատում է Լենինը: Միջին շերտերի մի ամբողջ շարք անխուսափորեն նորից ստեղծվում է կապիտալիզմի միջոցով»): Մասնավոր տնտեսական կապիտալիզմը ցարական Ռուսաստանում հանձին «յուրաքանչյուր մանր բուրժուալի» — Լենինի արտահայտությունը, «իւր ագենտն ունեւր»: Այդ մանր բուրժուալի տնտեսական տարերքը շարժվում եր կապիտալիստական հարաբերությունների դեկավարության տակ: Պատերազմի ժամանակ մանր բուրժուական սպեկուլյացիայի, մասնավոր տնտեսական կապիտալիզմի հիմք եր կազմում»):

«Պարենտուրքի մասին» հոդվածում Լենինը խոսում է «մանր բուրժուական կապիտալիզմի» մասին: «Քանի դեռ մենք ապրում ենք մանր-բուրժուական յերկրում — ասաց Լենինը խորհուրդների 8-րդ համագումարում — կապիտալիզմի համար Ռուսաստանում ավելի ամուր տնտեսական հիմք գոյություն ունի, քան կոմունիզմի համար: Այս պետք է հիշել: Ամեն վոք, վոր ուշադիր դիտել է գյուղի կյանքը, համեմատելով քաղաքի կյանքի հետ, գիտե, վոր կապիտալիզմի արմատները մենք չենք պոկել և մեր ներքին թշնամու ֆունդամենտը, հիմքը, չենք խախտել: Վերջինս պահվում է մանր տնտեսության վրա...»***): Կոմինտերնի III կոնգրեսում, անդրադառնալով նույն

*) Ленин, Собр. соч. XI т. I ч. стр. 60.

**) Ленин, XV т. стр. 265.

***) Ленин, XVII т., стр. 428.

այս մտքին, Լենինը բնորոշում եր գյուղացիությունը վորպես «վերջին կապիտալիստական դասակարգ»: Պրոլետարիատի դեկտատուրայի պայմաններում իսկ, պատմական վորոշ ժամանակաշրջանի ընթացքում, գյուղացիության հենակետը մանր արտադրություն է, մասնավոր սեփականությունը: Այդ միջավայրն է, վոր ծնում է և սնում կուլակներ, հարստահարողներ, կապիտալիստներ: Կապիտալիզմի խոր, ընդարձակ այս հիմքի վրա յե, վոր բուրժուազիան իր վերջին, կատաղի պայքարն է տանում կոմունիզմի դեմ: Մանր-բուրժուական, մանր սեփականատիրական, գյուղացիական այս հիմքի վրա յեր հենց, վոր բուրժուական հակահեղափոխությունը իր Տամբոլի ու Կրոնշտատն է ստեղծում պրոլետարիատի դեմ: Մանր տնտեսատերը, «իւր ամենորյա, լիորյա, անտեսանելի, անըմբռնելի, կազմալուծիչ գործունեյությունը իրագործում են այն իսկ արդյունքները, վոր անհրաժեշտ են բուրժուազիային, վոր ռեստավրացիայի յին յենթարկում բուրժուազիան»): Անցյալում այս տեսակետից բացառություն չեն կազմել նաև հետաքննաց յերկրների ազգային-ազատագրական շարժումները: «Ամենավորը կասկածն իսկ չկա, վոր յուրաքանչյուր ազգայնական շարժում կարող է միայն բուրժուական-դեմոկրատական շարժում լինել, վորովհետեւ հետաքննաց յերկրներում բնակչության գլխավոր մաստան կազմված է գյուղացիությունից, վորը բուրժուական-կապիտալիստական հարաբերությունների ներկայացուցիչն է» **):

Լենինը խուսափում եր «աշխատավոր մանր բուրժուազիա» և նման մշուշապատ արտահայտություններ

*) Ленин, второе изд., XXV т., стр. 191.

**) նույն տեղ, էջ 352:

բից: Նա վուչ բոլոր պայմաններում «հեղափոխական» մասսա չեր համարում մանր բուրժուազիան — ինչպես անում եյին նարոդնիկները և տրամադիր ե անելու այդ ընկ. Վանանդեցին և վուչ ել՝ լիովին «ռեակցիոն մասսա» ինչպես անում եյին այդ լասսալյանները, հետագայում՝ մինչև իկներն ու տրոցկիստները: Լենինը հետ եր մղում դյուղացիների վերաբերմամբ և սերների կողմից անխտիր կիրառված տերմինները — «աշխատավորներ, շահագործվողներ, բանվոր դասակարգ, աշխատավոր մասսա, հարստահարվողներ դասակարգ, հարստահարվող դասակարգեր և այլն»): Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո իսկ՝ Լենինը դանազանում եր — «Գյուղացին՝ վորպես աշխատավոր և դյուղացին՝ վորպես հարստահարող սպեկուլյանտ, սեփականատեր: «Այնչափ — վորչափ»**):

Նշելով մանր բուրժուազիայի միջանկյալ դիրքը կապիտալիստական հասարակության մեջ, նրա միջին դրոթյունը բուրժուազիայի և պրոլետարիատի արանքում, Լենինը շեշտում եր «մանր բուրժուազիայի լուրանատուկ բնույթը, նրա չերկվոթյունը, չերկդիմությունը, նրա մյուսմը դեպի փոքրամասնությունը, վորը, բախտի բերումով, հաղթական ե դուրս գալիս կովից, նրա թշնամական վերաբերմունքը դեպի «անաջողակները», այսինքն՝ մեծամասնությունը»***): «Մանր բուրժուան դրում ե Լենինը մի այլ տեղ — չերկդիմի չե իր իսկ բնույթով, և հակվելով, մի կողմից, դեպի պրոլետարիատը և դեմոկրատիզմը, նա, մյուս կողմից, հակվում ե դեպի ռեակցիոն դասակարգերը, ձգտում ե

կասեցնել պատմության ընթացքը, ընդունակ ե չենթարկվելու միահեծանության (թեկուզ, որինակ, Ալեքսանդր III «Ժողովրդական քաղաքականության») եքսպերիմենտների ու սիրախաղերի աղդեցությանը, ընդունակ և տիրող դասակարգերի հետ դաշինք կնքելու պրոլետարիատի դեմ, նպատակ ունենալով ամրացնելու իր՝ վորպես մանր սեփականատիրոջ՝ դիրքը»): «Ինչպես կյանքի մեջ մանր արտադրողը ձուլվում ե բուրժուայի հետ շնորհիվ իր ունակության՝ շուկա դուրս գալու վորպես ուրույն ապրանքարտադրող և շնորհիվ իր շանսերի՝ ճանապարհ հարթելու իր առաջ, խոշոր տնտեսատեր դառնալու — այնպես և մանր արտադրողի իդեոլոգը ձուլվում և լիբերալի հետ...»*): Ապրանքատեր մանր բուրժուազիայի, մասնավորապես ապրանքատեր դյուղացու յերկսայրի այս միտվածությունը շեշտված ե նաև պրոլետարական հեղափոխության պայմաններում: «Գյուղացին, վորպես աշխատավոր, սոցիալիզմի կողմն ե քաշում, բուրժուազիայի դիկտատուրայից դերադասելով բանվորների դիկտատուրան: Գյուղացին, վորպես հացավաճառ, քաշում ե բուրժուազիայի, ազատ առևտրի կողմը, այսինքն՝ հետ դեպի «ընդունելի», վաղեմի, կապիտալիզմը»***):

Այն հանգամանքը, վոր այսոք, պրոլետարիատի դիկտատուրայի ներքո, մեկ հաջողվում ե սահմանափակել դյուղացի վերնախավերի հարստահարչական ձգտումները, պոկել մանր-բուրժուական մասսան կապիտալիստական բուրժուազիայի աղդեցությունից, տանել նրան մեր հետևից, չենթարկել նրան գաղա-

*) Ленин, VI т. стр. 55.

**) «Ленинск. Сборник», т. III, стр. 513.

***) Ленин, Собр. Соч. второе изд. II т., стр. 79.

*) Ն. տ. եջ 178—9.

**) Ленин, второе изд. I т., стр. 262.

***) Ленин, XVI т., стр. 227.

փարսկան վերադաստիարակման—այդ հանգամանքը բնավ իրավունք չի տալիս մեզ իդեալականացնել մանրը բուրժուազիայի անցյալը, վերակենդանացնել նա-րոգնիկական պատանքները նրա մասին: Յեթե այսօր հեգեմոնիա նվաճելով մանր բուրժուազիայի վերաբեր-մամբ, պրոլետարիատը դառնում է նրա առաջավոր ներկայացուցիչը, չի նշանակում բնավ, վոր այդպիսին յեղել է պրոլետարիատը նաև յերեկ—միշտ և բոլոր պայմաններում: Գյուղացիությունը, վոր այսօր պրո-լետարիատի դիկտատուրայի ներքո գոգվում է բան-վորության հետ և անտոգոնիստ դառնում բուրժուա-զիային, յերեկ, կապիտալիզմի տիրապետության ժամանակ, գոգվում էր բուրժուազիայի հետ դառնում պրոլետարիատի անտոգոնիստը: Առարկելով նա-րոգնիկներին, լենինը գրում էր. «մանր արտադրող-ները թշնամաբար տրամադրված լինելով դեպի կա-պիտալիզմը, կազմում են փոխանցիկ Նի դասակարգ, վոր գոգվում է բուրժուազիայի հետ, ուստի և անկա-րող են հասկանալու, վոր իրանց անհաճո խոշոր կապի-տալիզմը պատահականությունն է, այլ ներկա ամբողջ տնտեսակազմի արդյունք»^{*)}: «Վերջին կես դարվա ըն-թացքում, մեզանում տիրող թեորիաներին հակառակ՝ ուս համայնական գյուղացիությունը—կապիտալիզմի անտոգոնիստը է, այլ ընդհակառակը, նրա ամենից խոր և ամենից ամուր հիմքը»^{**)}:

«Մանր հողագործը, կապիտալիզմի ժամանակ ապրանքարտադրող է դառնում—միևնույն է, կա-մենում է նա այդ թի է, նկատում է նա այդ թի է: Յեվ այդ փոփոխության մեջ է գործի վողջ ելությունը:

*) Ленин, Собр. соч. второе изд. I т., стр. 238).

**) Ленин, Собр. соч. втор. изд. III т., стр. 125.

Հենց այդ փոփոխությունը, անգամ յերբ նա (գյու-ղացին) չի շահագործում վարձու բանվորներին, միևնույն է, պրոլետարիատի անտոգոնիստ է դարձնում նրան, մանր բուրժուա յե դարձ-նում նրան: Նա իր պրոդուկտն է վաճառում, պրոլե-տարիատը—իր ուժը: Մանր հողատերերը, վորպես դա-սակարգ չեն կարող չձգտել բարձրացնելու գյուղա-տնտեսական պրոդուկտների գները: Իսկ սա հավասա-րադոր է նրանց՝ խոշոր հողատերերի հետ մեկտեղ, մաս-նակցությանը հողային ռենտայի բաշխմանը, նրանց համերաշխությանը պոմեշչիկներին հետ՝ մնացած հա-սարակության դեմ: Մանր հողագործը, իր դասա-կարգային դիրքով, անխուսափելի կերպով, ապ-րանքային տնտեսության զարգացման ընթացքում, դառնում է մանր ագրարի»^{*)}:

Իրերի այս վիճակին համապատասխանում է մի-անգամայն այն փաստը, վոր կապիտալիզմի ժամա-նակ գյուղացիության և մանր բուրժուազիայի ղեկա-վարը պրոլետարիատը չէր ընդհանրապես, այլ պրոլե-տարիատի դեմ պայքարող մանր-բուրժուական, բուր-ժուական և անգամ կալվածատիրական հոսանքներն ու կուսակցությունները: «Ընդհանրապես ասած՝ գրում էր լենինը—պրոլետարիատը բնավ մանր բուրժուա-զիայի առաջավոր ներկայացուցիչը չէ: Յեթե այդ լի-նում է, դա միայն այն ժամանակ, յերբ մանր արտա-դրողը գիտակցում է անխուսափելիորեն իր կործա-նումը, յերբ նա չլքում է իր տեսակետը և կանգնում պրոլետարիատի տեսակետի վրա»: Իսկ վորպես «իր տեսակետը» դեռևս չլքած մանր արտադրողի առաջա-վոր ներկայացուցիչ շատ հաճախ յիրևան է գալիս ան-

*) Ленин, IX т., стр. 266.

տիսեմիտը և ազրաբին, նացիոնալիստը և նարոդնիկը. սոցիալ-ռեֆորմատորն և «մարքսիզմի քննադատը»*):

Ցարիզմի դեմ պայքարելիս մեր կուսակցությունը առաջնորդվում եր բանվորության և գյուղացիության դաշինքի լողունգով: Այդ լողունգի կենսադրծման հաստատարիով ե, վոր կուսակցությունը տապալեց հին ցարական կիսաֆեոդալական ռեժիմը: Սակայն դրա համար կուսակցությունը նախապես պիտի հաղթահարեր գյուղացիության (տատանումները, ցրեր նրա նախապաշարումները «գաղափարապես պոկեր նրան ռեակցիայից»**), պոկեր նրան այն կուսակցություններից, վորոնք վազում էին ռեակցիոն բուրժուազիայի և նրա գաղափարախոսության հետևից: «Развитие капитализма в России» աշխատության յերկրորդ առաջաբանում Լենինը գրում եր.

«Յեվ հեղափոխության ընթացքում, և՛ քաղաքական զանազան կուսակցությունների բնույթի մեջ, և դադարական-քաղաքական շատ հոսանքների մեջ յերեվան ե գալիս այս մասսայի (իմա գյուղացիության Ա. Հ.) դասակարգային ներքուստ-հակասական կազմը տնտեսատիրական և պրոլետարական տնդենցների անտոգոնիզմը նրա մեջ: Տնտեսապես աղքատացած մանր տնտեսատիրոջ տատանումը հակահեղափոխական բուրժուազիայի և հեղափոխական պրոլետարիատի միջև նույնքան անխուսափելի յե, վորքան անխուսափելի յե կապիտալիստական յուրաքանչյուր մի հասարակության մեջ այն յերևույթը, վոր մանր արտադրողների չնչին մի փոքրամասնությունը հարստանում ե, «մարդ ե դառնում», բուրժուա դառնում, իսկ ճշի-

շող մեծամասնությունը կամ քայքայվում ե միանգամայն, վարձու բանվորներ կամ պառուպերներ դառնում, դեգերում մշտապես պրոլետարական գոյավիճակի սահմանագծի վրա»:

Խոսելով գյուղացիության նույն այս դեգերումների մասին մի այլ տեղ գրում եր դարձյալ Լենինը. «Նրա (գյուղացիության) գիտակցությունը անհամեմատ ավալի ցածր աստիճանի վրա յեր գտնվում, և միապետական (այլև նրա հետ անխղելի կերպով կապված սահմանադրական) պատրանքները հաճախ ընդարմացնում էին նրա յեռանդը, կախման մեջ դնում նրանց լիբերալներից, իսկ յերբեմն՝ սե հարյուրակյաններից, դատարկ ցնորք սնում նրա մեջ «աստծո յերկրի» մասին՝ ազնվական հողատերերի դեմ գրոհի դիմելու, նրանց վերջնականապես կործանելու փոխարեն»):

Կամ արդյոք վորեւե զանազանություն կովկասահայ մանր բուրժուազիայի քաղաքական վաղեմի ցնորքների, ցարիզմի կամ կապիտալիստական Արևմուտքի աշակցությամբ «ավետյաց յերկիրն» հասնելու նրանց յերբեմնի յերազանքների և ուսումնական գիտակցության մուծ ծալքերում «աստծո յերկրի» մասին սնվող սին այս ցնորքների միջև:

Ցարիզմի գաղութային քաղաքականության և առևտրական կապիտալի գիշատիչ աղդեցության ներքո՝ կովկասահայ մանր բուրժուազիան յենթակա յեր քայքայման: Այդ չեր նշանակում, վոր քայքայվում էին մանր-բուրժուական բոլոր տնտեսությունները: Ութսունական-ինսունական թվականներին մանր բուրժուազիայի քայքայումը տեղի ուներ արդյունաբերական կապիտալի վերելքի պայմաններում: Քայքայվող

*) «Ленинск. Сборник» II т., стр. 79.

**) Ленин, VIII т., стр. 65.

*) Ленин, Соч. соч. XI т. II, стр. 265.

տնտեսությունների տեղը խնրը կապիտալիստական հասարակությունը նպաստում էր նոր տիպի մանր տնտեսությունների վերարտադրության: Մանր ապրանքատերերի տնտեսական քայքայման պրոցեսում զլուխ ելին բարձրացնում նրա «աչքաբաց», «դոչադ» տարրերը, վորոնք դիմադարձ են լինում դեպի բուրժուազիան, դառնում նրա շոշափուկները: Այդ բուրժուազիան, հայ թե ոտար, կապված ըստ ամենայնի ցարիզմի գաղութային քաղաքականության հետ, հեղափոխական վարքագիծ չունեի Անդրկովկասում, ինչպես չունեի նաև նրա նախորդը—առևտրական բուրժուազիան: Բնականաբար խոսք չեի կարող լինել նաև հայ թե ոտար առևտրական կամ արդյունաբերական կապիտալին միտված, նրանից փրկված լինում ակնկալող մանր բուրժուազիայի հեղափոխականության մասին: Պատահական չե բնավ, վոր հետևողական հեղափոխական պայքար ցարիզմի դեմ, մասնավորապես հեղափոխական-ազդարային կռիվներ, չեն արձանագրված կովկասահայ իրականության մոտիկ անցյալում:

Մանր բուրժուազիայի հեղափոխական առաջնորդ կարող ե լինել հետևողականորեն միայն պրոլետարիատը: Բայց կտրված հայկական գավառներից տարածությանմբ, ինքը տակավին դեռ լիովին չկազմակերպված վորպես հեղափոխական դասակարգ, մեղանում արդյունաբերական կենտրոնների պրոլետարիատը դժվար եր կապվում գյուղի հետ և ավելի դժվար՝ կազմակերպում այն: Նրա հեղափոխիչ ազդեցությունը հաղթեց կովկասահայ գյուղում հազիվ միայն Հայաստանի խորհրդայնացման նախորդին—1919—20 թ. յերբ Հայաստանի քաղաքային և գյուղական մանր-բուրժուական միջավայրում, այլև այդ միջավայրից դուրս, նպաստավոր

նախադրյալներ ստեղծվեցին Մայիսյան և Նոյեմբերյան —բանվոր-գյուղացիական ապստամբությունների համար: Այլ եր դրությունը ազգային շարժման վերելքի շրջանում—անցյալ դարի վերջին տասնամյակներում—թյուրքահայ յերազների տիրապետության ժամանակ: Մանր բուրժուազիայի յերկու տարբեր շերտերը,—և նրա այն «դոչադ» վերնախավերը, վորոնք բռնված եյին ներքին շուկայի ընդարձակման տենդով, և նրա վարի այն խավերը, վորոնք հալածված եյին ներքին շուկայից՝ գյուղի և քաղաքի հայ և ոտար բուրժուազիայի ներշնչմամբ փրկված եյին վորոնում սահմանի մյուս կողմը: Խուսափելով ցարիզմի դեմ վարելիք հեղափոխական կովից՝ մանր բուրժուազիայի մի շերտը, այն վոր քարշ գալով առևտրական խոշոր բուրժուազիայի փեղերից բռնված եր ներքին շուկայի ընդլայնման տենդով՝ հենակետ դարձավ դաշնակցական մտայնության: Մյուսը, վոր հալածվում եր ներքին շուկայից և հանգրվան փնտրում նրա «անկախ» գոյության համար թյուրքահայ յերկնակամարի ներքո՝ հենակետ դարձավ հնչական գաղափարախոսության: Ցարիզմի հալածանքները վոչ միայն չեյին նվազեցնում այս մտայնությունը, այլև ավելի տենդագին եյին դարձնում «ադգուլին» փրկվելու ուժանտիկ ցնորքը:

V1

Կարճը և խոսք լինել այս պայմաններում մանր-բուրժուական միջավայրի արտադրած «դոչադներին» կուսակցություն—Դաշնակցության «հեղափոխական» բռնությունի մասին: Այս հարցին ընկ: Վանանդեցին անդրադառնում ե իր հոգվածի յեղրափակիչ մասում: Սայ-

թաքնելով մանր բուրժուազիայի ընդլսթագրման տեսական խնդրում՝ նա անում է այս հարցում «գործնական» մի շարք հետևություններ, վորոնք իբր թե պարտավորիչ պիտի լինեյին, յեթե ճիշտ դուրս գար Դաշնակցության ծագման մասին իմ պաշտպանած տեսակետը:

«Գործնական» այդ հետևությունները վերաբերվում են նախ անցյալին:

«Քանի վոր—գրում է ընկ. Վանանդեցին—հայ մանր բուրժուական մասսան, վորպես ցարիզմի կողմից շահագործված տարր մղել է հեղափոխական պայքար, ապա այդ մասսայի շահն ու մտայնությունն անդրադարձնող կուսակցությունը — Դաշնակցությունը— ևս պետք է ճանաչվի վորպես հեղափոխական կուսակցություն, վորը ցարիզմի դեմ մղել է կռիվ, այդ ցարիզմը և նրա հենարանը կազմող վորջ հասարակարգը վերացնելու համար»:

Յեա հարկադրված կլինեյի ընդունելու ընկ. Վանանդեցու յեզրակացությունները, յեթե հիշավի պոկեյի կովկասահայ մանր բուրժուազիայի անցյալը հայ ու ոտար հակահեղափոխական իմպերիալիստական բուրժուազիայի գաղափարական աղդեցությունից և յեթե արձանագրած լինեյի, իրոք, Դաշնակցության եկավարությամբ նրա կատարած սկզբունքորեն հեղափոխական ակտեր: Բայց յիս այդ չեմ արել, և ընկ. Վանանդեցու այդ ուղղությամբ արած ըրուր յենթադրությունները բացառապես յերևակայության արդյունք են: Համեմատելով «Նորք»-ի վերջին գրքում Դաշնակցությունն ու վրաց մենշևիզմը՝ յիս անցյալի վերաբերմամբ ընտրողել ևմ վերջինս վորպես մի կու-

սակցություն, վորը իր ծննդյան վայրկյանից իսկ դասալիք եր լինում ցարիզմի դեմ պայքարող նարոդնիկությունից և ձեռք մեկնում ցարիզմի հետ կապված բուրժուազիային:

«Ազգային ներքին կյանքում—գրված է իմ հոդվածում—նա ընդհանուր ֆրոնտ է կաղմում խոշոր բուրժուազիայի հետ և կատաղի պայքար մղում «ազգի» հասարակական-քաղաքական շերտավորման դեմ: Հանգամանքներ են սրանք, վոր դնում են կուսակցության վրա. հակահեղափոխական ության կնիք, դարձնում նրան Անդրկովկասում ազգայնական աեակցիայի գործիք՝ սկզբից և յեթ»*):

Յեթե անգամ հավասարության գիծ քաշելու լինեյինք մանր-բուրժուական Դաշնակցության և մանր բուրժուական եսերների միջև իսկ՝ քաղաքականապես մենք պարտավորված չպետք է լինեյինք այնուամենայնիվ այլ վերաբերմունք ունենալու դեպի Դաշնակցությունը, քան այն, վոր ունեյինք բուրժուազիայի լիբերալ ներկայացուցիչների վերաբերմամբ առհասարակ: Եսերներին մենք տակավին 1903 թ.—կուսակցության յերկրորդ համագումարի ընդունած բանաձևի մեջ ենք ընդլթագրել իբրև «բուրժուական-դեմոկրատական ֆրակցիա, վորոնց նկատմամբ սոցիալ-դեմոկրատիայի կողմից չի կարող լինել այլ վերաբերմունք, քան դեպի բուրժուազիայի լիբերալ ներկայացուցիչները առհասարակ»: Նույն բանաձևը անհրաժեշտ եր համարում, վոր սոցիալ դեմոկրատները «պարզաբանեն և ընդգծեն «սոցիալիստ-հեղափոխականներին» բուրժուական տենդենցները և նրանց գործնական

*) «Նորք», 1928 թ. գիրք առաջին, էջ 165:

անկարողությունը ընդհանուր դեմոկրատական տեսակետից»։ «Վճռական պայքար—գրում էր Լենինը 1909 թ. տրուդովիկների, եսերների, կենսների և ընկ.-quasi—սոցիալիստական դոկտրինյորների դեմ և պրոլետարիատի ու հեղափոխական գյուղացիության դաշինքի ուղղակի, հաստատ ընձեռնում բուրժուական հեղափոխության ժամանակ»*)։

Այսպիսի վերաբերմունք էր հայտնաբերում մեր կուսակցությունը տակավին ցարիզմի տիրապետության ժամանակ դեպի ուսումնարաններից և կուսակցությունները, մասնավորապես դեպի եսերները, վորոնց հետ սիրում էին համեմատվել հաճախ իրանք դաշնակները։

Սակայն Դաշնակցությունը վորպես քաղաքական կազմակերպություն չի գտնվել անցյալում նույն իսկ եսերականության մակարդակի վրա։ Հեղափոխական պայքար ցարիզմի դեմ—եսերական կուսակցության համար սա հիմնական նպատակ էր, քաղաքական դեկավարող սկզբունք։ Մինչդեռ Դաշնակցության համար յերբեք գոյություն չի ունեցել այդպիսի սկզբունք կամ նպատակ։ Դաշնակցության ռեակցիոն ազգայնականությունը վորչնչով չի տարբերվել ուսումնարաններից կամ անտիսեմիտ այն կուսակցությունների մտայնությունից, վորոնք, Լենինի կարծիքով, «առաջավոր» կուսակցություններ էին յերբեմն ուսումնարան բուրժուազիայի համար։ Դաշնակցական կամ հնչակյան մեմբերականությունը համեմատել կարող ենք քաղաքական ապստամբայն ագրարիի ռեակցիոն ցնորքների, սիոնիստի հակահեղափոխական ռոմանտիզմի հետ։ Գործիք լինելով ռեակցիոն բուրժուազիայի ձեռքին, շարունակ «հայանապաստ»

ակնկալություններ ունենալով ցարիզմից, դաշնակիզմը կամ հնչակիզմը հետևողական հեղափոխական կռիվ չեն վարել ցարիզմի դեմ, չեն գտնվել յերբեք հեղափոխական դեմոկրատիայի սկզբունքային դիրքերի վրա։ Մեր կուսակցությունը պայքարում էր եսերների և մենշևիկների դեմ անգամ այն ժամանակ, յերբ այդ կուսակցությունները գտնվում էին հեղափոխական դեմոկրատիայի դիրքերում։ Այդ պայքարը, պայքար էր մանր բուրժուազիայի տատանումների դեմ, նրա հեղափոխական անվճռականության դեմ։ ի՞նչ խոսք այն մասին, վոր մեր կուսակցությունը ավելի ևս պետք է կռվեր, ու կռվել է փաստորեն, Դաշնակցության դեմ, մի կազմակերպության, վորը արտահայտում էր բացառապես մանր բուրժուազիայի ռեակցիոն տրամադրությունները, նրա որիշխտացիան դեպի ռեակցիոն, բուրժուական-իմպերիալիստական ուժերը։

Վճռադից է սակայն յեղնում ընկ. Վանանդեցու անհեթեթ այն յեղրակացությունը, վոր իբր յես կամենում եմ ռեաբիլիտացիայի յեսթարկել, Դաշնակցության «հեղափոխական» անցյալը, վերաքննել Դաշնակցության դեմ բայլելիզմի վարած անողոր պայքարի պատմությունը։ Անշուշտ, միայն ընկ. Վանանդեցուն մանր բուրժուազիայի մասին ունեցած նարոդնիկական տեսակետից, նրա՝ կովկասահայ մանր բուրժուազիայի անվերապահ հեղափոխականության թեորիայից։ Այդ թեորիան ընկ. Վանանդեցու սեփականությունն է։ Ուստի և Դաշնակցության «հեղափոխականության» դրանից բխող յեղրակացությունը կարող էր դարձյալ միայն ընկ. Վանանդեցու, բայց վոր իմ ըմբռնումների գործնական հետևությունը լինել։

Դաշնակցությունը բուրժուական կուսակցություն

*) Ленин, XI т., ч. I, стр. 250.

և—նայտարարում ելին մենշիկները: Սակայն մենշիկ-
վիկները համար բուրժուազիան հեղափոխական
դասակարգ եր: Այստեղից եր առաջանում նաև մեն-
շիկները համաձայնողական դիրքը հանդեսը Դաշ-
նակցություն: Դաշնակցությունը մանր-բուրժուական
կուսակցություն և—ընդգծում ելին սպեցիֆիկները:
Բաց մանր բուրժուազիան անվերապահորեն «ազմկա-
րար և արկածախնդիր» տարը եր սպեցիֆիկների հա-
մար: Այստեղից եր սկիզբ առնում նաև նոր առաջնորդ-
ների կարողը սպեցիֆիկների շարքերում, սպեցիֆիկմի
դիմադարձը դեպի «առաջադեմ», «շրջանկատ» բուր-
ժուազիան և նրա կուսակցությունը—վերասերված
Դաշնակցությունը:

Դաշնակցության անցյալի մասին իմ ձևակերպած
տեսակետը հստակաբար անհաշտելի չե այս ըմբռ-
նումներից մեկի կամ մյուսի հետ: Ինձ համար ան-
կասկածելի չե կովկասահայ բուրժուազիայի ուսակ-
ցիոն դերը բուրժուական հեղափոխության ժամա-
նակ: Ինձ համար անկասկածելի չե և այն, վոր Դաշ-
նակցության միջոցով անցյալում կենսագործվում եր
կովկասահայ մանր բուրժուազիայի դիմադարձը դեպի
ուսակցիոն բուրժուազիան: Բուրժուական-իմպերիա-
լիստական հոսանք մանր-բուրժուական շարժման մեջ,
բուրժուական իդեոլոգիա մանր-բուրժուական միջա-
վայրում—հա ինչպես կարելի չե բնորոշել իմ ըմբռ-
նումով, դաշնակցականությունը, նրա ծառայական
դիրքը բուրժուազիայի հանդեպ, նրա դերը բուրժու-
ական հակահեղափոխության մեջ: Կարո՞ղ ե կասկած
լինել այն մասին, վոր այս ըմբռնումը վանում ե ա-
մեն մի պատրանք Դաշնակցության «հեղափոխական»
անցյալի նկատմամբ:

Իմ ըմբռնումներից, ընդհակառակը, հետևում ե միայն,
թե վորչապի մանր բուրժուազիան չեը լքել բուրժուական
իմպերիալիստական որիչնություն, վորչապի նա չեը
հրաժարվել ումանտիկական «իր տեսակետից» ազգային
շարժման մասին, վորչապի նրա անցյալը ընթացել և
այդ տեսակի հետևողական արտահայտիչ Դաշնակցու-
թյան ղեկավարությունը, խոսք չե կարող լինել նրա,
մանր բուրժուազիայի, հեղափոխականությունը մասին:
Մենք կարող ենք վերադնահատել մանր բուրժուազիա-
յի անցյալը միայն այն վարկյանից, յերբ նա, մանր
բուրժուազիան, սթափվելով Թյուրքահայաստանի յե-
րադներից, գիտակցորեն վտաք ե դնում Ռուսաստանի
հեղափոխության շեմքի վրա, վանում ե իրենից Դաշ-
նակցության և նրան հովանավորող բուրժուազիայի
հակահեղափոխական ղեկավարությունը, դիմադարձ
լինում դեպի պրոլետարիատն ու նրա կուսակցությու-
նը: Այս դեպքում մենք գործ ունինք արդեն մանր
բուրժուազիայի հեղափոխական կերպարանափոխու-
թյան հետ: Աստիճանաբար և փաստորեն մանր բուր-
ժուազիան թողնում ե «իր տեսակետը», յուրացնում
պրոլետարիատի և նրա կուսակցության տեսակետը՝
նախ բուրժուական և ապա նաև սոցիալիստական հե-
ղափոխության հեռանկարների վերաբերմամբ: Դրա-
նով նա նկատում եր պրոլետարիատն ու նրա կուսակ-
ցությունն իր շահերի և մտայնության հետևողական
արտահայտիչ, իր պայքարի առաջավոր ղեկավար:

Կովկասահայ մանր բուրժուազիայի հեղափոխական
անցյալի մասին խոսք կարող ե լինել պատմականորեն
այնչապի միայն, վորչապի այդ անցյալը դարձնվել ե
կոմունիստական կուսակցության ղեկավարության
ներքո: Ավելորդ և ասել, վոր հակահեղափոխական յե-

բևութներ եյին մանր բուրժուազիայի կամ նրա առանձին շերտերի թյուրքահայ յերազները, Դաշնակցության ղեկավարությամբ նրա կատարած «ինքնապաշտպանության» ակտերը, նրա մասնակցությունը ազգայնական ջարդերին և կամավորական շարժմանը, նրա իլյուզիաները «միացյալ ու անկախ» Հայաստանի մասին, նրա առնչությունը փետրվարյան ավանտյուրիայի հետ: Հարկավ այս գնահատականը մնում է իր ուժի մեջ այն չափով միայն, ինչ չափով մանր բուրժուազիան կամ նրա առանձին շերտերը կապ են ունեցել փաստորեն նշած յերեվոյթների հետ: Մուսլայի յերևոյթների դիմաց հեղափոխական պայծառ դրվագներ են կազմում մանր բուրժուազիայի այսինքն՝ դեպի պրոլետարիատը դիմադարձ յեղած նրա աշխատավորական մասսաների, — մասնակցությունը Մայիսյան և Նոյեմբերյան ապստամբություններին, քաղաքացիական կռիւների ժամանակ նրա տարած պայքարները և հետագա տարիների նրա մասնակցությունը սոցիալիստական — կառուցողական աշխատանքների մեջ:

VII

Քննենք հիմա ընկ. Վանանդեցու «գործնական» այն հետևությունները, վորոնք վերաբերվում են ներկային:

Պայքարը շահագործված մանր բուրժուազիայի և նրա «շահը» անդրադարձնող, նրա «հետևողական» կուսակցության՝ Դաշնակցության դեմ՝ պետք է ճանաչվի սխալ, հակասական: «Պետք է» գրավել մանր բուրժուազիային, ղեկավարել և դաստիարակել նրան, հետևաբար պետք է գրավել դեպի հեղափոխությունը նաև շահագործված

մանր բուրժուազիայի շահերի պաշտպան՝ Դաշնակցությունը, կամ թե պետք է հեղափոխականացնել նրան, դաստիարակել և դարձնել սոցիալիզմի կողմը»

Ահա թե ինչ «գործնական» յեղրակացություններ պետք է հանել, Վանանդեցու կարծիքով, իմ առաջադրած տեսությունից:

Այստեղ ընկ. Վանանդեցին արհամարում է նախ այն հանգամանքը, վոր Դաշնակցության մանր-բուրժուականության մասին իմ արած դիտողությունները վերաբերում են միայն նրա անցյալին, վոր Դաշնակցության մանր-բուրժուական ծագումը չի կարելի հիմնական ետ դարձնել մեր ներկա քաղաքականությունը ճշտելու ժամանակ: Դաշնակցության անցյալը կարող է միայն յերկրորդաբար նկատի առնվել՝ մանր-բուրժուական շերտերի մեջ մեր տանելիք աշխատանքների ուղղությունն ու յեղանակը վորոշելու ժամանակ: Սակայն ընկ. Վանանդեցու արած հետևությունները սխալ կլինեյին, յեթե անգամ ժխտեյինք Դաշնակցության սոցիալական վերասերման փաստը, յեթե յենթադրենք անգամ, թե Դաշնակցությունը շարունակում է մնալ մանր բուրժուազիայի կուսակցություն: Այս դեպքում իսկ Վանանդեցու յեղրակացությունները հետևողական կլինեյին դարձյալ միայն այն պայմանով, յեթե ընդունեյինք նրա հակալեւինիյան, հակամարքսիստական տեսակետը «աշխատավոր», «շահագործվող» մանր բուրժուազիայի մասին: Նկատեցեք միաժամանակ, վոր վերը բերված հատվածներում Վանանդեցին շփոթում է իրար հետ դասակարգը և նրա ավանդարդը՝ կուսակցությունը: Նա նույնացնում է մանր-բուրժուական մասսան մանր-բուր-

ժողովական ղեկավարների հետ: Այս շփոթը, այս շփափլավն է, վոր Վանանդեցու պըջի տակ դադարաբական սնունդ է կամենում դառնալ այսորվա դաստիարակվող սերունդների համար: Այս շփոթը, այս շփափլավը կուշտ ճաշակելուց հետո յե միաժամանակ, վոր ընկ. Վանանդեցին խոյանում է ասպետորեն իր յերևակայած քամու ջրաղացների դեմ: Զարմանալի յեն այս բոլորից հետո նրա զառանցական «հետևությունները» իմ գրածների կամ չգրածների առթիվ:

Տնտեսական զիջումներ անել մանր արտադրողներին, մանր սեփականատերերին և ամենից առաջ աշխատավոր գյուղացիությանը, դաշինք կնքել միջին գյուղացիության հետ, վերադաստիարակողի դեր ստանձնել գյուղացիական մասսաների նկատմամբ՝ այդ բոլորը հնարավոր է, յեթե դատում ենք մասսան նրա հին ղեկավարներից ու կուսակցություններից, յեթե պրոլետարիատի ղեկատարության ներքո միակ ու միասնական կոմունիստական կուսակցությունը անողոք պայքար է տանում այդ կուսակցությունների ու ղեկավարների դեմ: «Ըստ ամենայնի ոգնել աշխատավոր մասսային, մերձենալ նրան, առաջ քաշել նրա միջից հարյուրավոր և հազարավոր անկուսակցական աշխատավորներ տնտեսական աշխատանքի համար: Իսկ նորաձև կրոնշտատյան համադրեստ հաղած մենշևիկներին ու եսերներին խնամքով պահել բանտում կամ ուղարկել Բեռլին Մարտովի մոտ՝ Զերնովի, Միլյուկովի, վրաց մենշևիկների հետ մտքերի ազատ փոխանակություն ունենալու համար»*):

Այսպես եր հրահանգում նոր տնտեսական քաղաքականություն հանձնարարելիս ընկ. Լենինը: Կամ վորևէ

առիթ ավելի քնքույշ վերաբերմունք ունենալու դեպի մանր բուրժուական դաշնակները, յեթե անգամ անցյալի վերաբերմամբ հավասարության գիծ քաշելու լինինք Մարտովի և Վրացյանի, Զերնովի և Ռուբենլինինք Մարտովի և Վրացյանի, Զերնովի և Ռուբենլինինք կանգնած են բուրժուական հակահեղափոքերը կանգնած են բուրժուական հակահեղափոքի դեմ: 1921 թվականին Լենինը բռնորոշում եր եսերներին և մենշևիկներին վորպես «ամբողջ ռեակցիայի ավանդարդ»: Դրանք էյին «պրոլետարիատի ամենակատաղի թշնամիները»: Պրոլետարական հեղափոխության սկզբնաշրջանում բուրժուազիան առաջ է քաշում իր ամենից «ձախ» կուսակցությունները: «Ամբողջ բուրժուական դասակարգը, ֆեոդալ տիրապետող դասակարգի մնացորդները, մանր բուրժուազիայի՝ և գյուղացի-ազգաբնակչության մեծ մասը խմբվում են այն ծայրահեղ բուրժուական կուսակցության շուրջը, վորն այդ ժամանակ խոսքով ծայր աստիճան հեղափոխակն է ձևացնում իրան»*):

Նշանակում է սակայն այս, վոր պրոլետարիատի շեշտակի հարվածները չպետք է իջնեն հենց հակահեղափոխական բուրժուազիայի ավանդարդը կադմոդ, «ամենածայրահեղ», «ձախ», «դեմոկրատական» այս տարրերի գլխին: Այսպես է հասկանում ընկ. Վանանդեցին պրոլետարիատի ստրատեգիան սոցիալիստական հեղափոխության ժամանակ: Այդ տեսակետից է, վոր նրա կարծիքով կարող է խոսք լինել մեր դեպի Դաշնակցությունը ունենալիք քնքույշ վերաբերմունքի մասին, յեթե հիշավի դուրս գար, վորայդ կուսակցու-

*) Ленин, XVIII т., ч. I стр. 235.

*) Маркс и Энгельс, «Письма» изд. Адоратского. М. 1922 г. стр. 265.

թյունն և կովկասահայ միջավայրում մանր բուրժուազիայի քաղաքական ավանգարդը:

Բայց կարդացե՛ք ուշադրութեամբ այն, ինչ գրել եմ յես Դաշնակցութեան մասին և ամենից առաջ՝ 1923 թ. լույս տեսած իմ «Դաշնակցութեան իդեոլոգիայի ընթացիկ կուրսը» հոդվածը և կտեսնեք, վոր վերը բերված նկատառումներից իսկ զատ Դաշնակցութեան դեմ մեր տանելիք պայքարի յեկակտը պետք է լինի այսոր նրա բուրժուական վերասերման փաստը: Դաշնակցությունն այսոր անդրադարձնում է անմիջորեն հայ հակահեղափոխական բուրժուազիայի շահն ու մտայնությունը: Այսոր նա գաղութային և եմիգրանտական բուրժուազիայի հակահեղափոխական դրոշակի կրողն է, այդ բուրժուազիայի քաղաքականութեան հետևողական արտահայտիչը:

Ինձ համար անկասկածելի յե այն փաստը, վոր բուրժուական վերասերման պրոցեսի տիրական ազդեցութեանը դաշնակցական «գաղութային»—Բագլի, Թիֆլիսի և այլն—«արտայերկրային» կազմակերպությունները յենթարկված են չեղել տակավին 1905—06 թ.թ.: Դաշնակցութեան քաղաքական վերասերումը վորպես կովկասահայ մարտական բուրժուազիայի կուսակցություն շեշտվեց այդ կազմակերպությունների մեջ ուսական առաջին հեղափոխությունից հետո:

Պատերազմի և հեղափոխութեան տարիներին Դաշնակցութեան քաղաքական և սոցիալական վերասերման պրոցեսները տիրական ուժի ստացան նրա գաղափարին, «յերկրային», կազմակերպությունների ներսում: Այս յերևույթների մեջ անդրադառնում եմ շատ ժամանակաշրջանների ընդհանուր վայրիվերումները, հասարակական-քաղաքական

հարաբերությունների մեջ տեղի ունեցող հեղաշրջումները: Հայաստանի Նոյեմբերյան հեղափոխությունը ու դրան հաջորդող քաղաքացիական կռիվների արդյունքներն ու սոցիալիստական շինարարութեան ընագավառում կատարված աշխատանքները պոկեցին Դաշնակցությունից կովկասահայ մանր-բուրժուական մասսաները: Դուրս շարտվելով խորհրդային գծի այն կողմը՝ գաղութային-եմիգրանտական բուրժուազիայի միջավայրում ավարտվեց կուսակցութեան դասակարգային վերասերման պրոցեսը և նշվեց միաժամանակ նրա հետագա եվոլյուցիայի ուղին: Դաղութային հակահեղափոխութեան միջնուրրտում Դաշնակցութեան իդեոլոգիայի ֆաշիստական վերասերման պրոցեսը, վորպես ժամանակի նշան, այսոր շեշտված է ավելի պարզ ու հստակ գծերով, քան 1923 թ., յերբ գրի եյի առնում այդ խնդրին նվիրված իմ հոդվածը:

«Անասան» պահպանել գրեթե քառասնամյա գործունեյութեան ընթացքում, սոցիալական իր դիրքը, քաղաքական իր վարքագիծն ու մտայնությունը չեր կարող, ի հարկե, «տիյեզերական մասշտաբով» գործող Դաշնակցությունը: Հակառակը կարող են պնդել միայն իրանք՝ ուղղափառ դաշնակցականները: Մի բանի—հակահեղափոխութեան մեջ միայն անասան ու անխախտ են մնացել դաշնակցականները: Բայց միթե անփոփոխ են մնացել հակահեղափոխութեան դասակարգային իմաստը Պարզ չե միթե, վոր հեղափոխութեան սոցիալական բովանդակութեան մեջ տեղի ունեցած փոփոխությունները չեյին կարող դասակարգային բեկումներ չառաջացնել նաև Դաշնակցութեան հակահեղափոխական դիրքի մեջ: «Հեղափոխութեան կուսակցությունը համախմբում է ռեակցիայի կուսակցությունը»

—զրուժ ե Մարքսը: Հեղափոխութեան շնորհիւ կով-
կասահայ իրականութեան մեջ ստեղծվել են այսոր դա-
սակարգային նոր հարաբերութիւններ, առաջացել
հասարակական ուժերի նոր համախմբումներ: Դաշ-
նակցութեան քաղաքականութիւնն ու իդեոլոգիան այս
պայմաններում չեն լին կարող չստանալ նոր ուղղութիւն:
Համախմբվելով հակահեղափոխական բուրժուազիայի
դիրքերի վրա և մերվելով այդ բուրժուազիայի հետ՝
Դաշնակցութիւնը հակադրվում ե այսոր պրոլետարա-
կան հեղափոխութեանը վորպես բուրժուական
և եստպ վրացիայի կուսակցութիւն, վորպես ու-
ակցիայի կուսակցութիւն, վոր ծառայում ե անմի-
ջորեն մարտական բուրժուազիայի նպատակներին:
Անտեսել այս՝ կնշանակել անտեսել նոր կացութիւնը,
արհամարել Դաշնակցութեան դեմ մեր վարելիք ճակա-
տային պայքարի այն մեթոդները, վոր հրահանգվում
են նոր ստեղծված կացութիւնից:

Պարզ ե, վոր հակադաշնակցական մեր պայքարի
վերաբերմամբ չի կարող գործնական վորե ե տարա-
կարծութիւն լինել: Դաշնակցութեան մանր-բուրժուա-
կան անցյալի հաշվառքը կարող ե միայն լրացնել
վերասերված Դաշնակցութեան դեմ վարելիք ճակա-
տային մեր անհաշտ կռիվը՝ կովկասահայ մանր-բուր-
ժուական մասսաների մեջ անցյալից ժառանգու-
թիւն մնացած նացիոնալիստական վերապրումնե-
րի դեմ մեր վարելիք վճռական թիկունքային պայ-
քարով:

Մեր կուսակցութեանը հաջողվել ե քաղաքականա-
պես պոկելու Դաշնակցութիւնից մանր-բուրժուական
մասսան, թեքել այդ մասսայի քաղաքական որիչներու-
ցիան բուրժուազիայից դեպի պրոլետարիատն ու հա-

մաշխարհային հեղափոխութիւնը: Սակայն մեր պայ-
քարի ներկա շրջանում մանր բուրժուազիան դեռ չե
ապահովագրված նրա համար բնորոշ տատանումներից,
յերբուսումներից: Մանր բուրժուազիայի և նրա մտա-
վորականութեան միջավայրում դեռ արմատախիլ չե
յեղած բուրժուական նացիոնալիստական հին մտայնու-
թիւնը: Այս յերեւոյթը կներկայանա մեզ բնական իր
կերպարանքով, յեթե նկատենք, վոր նեպի ժամանակ
ակտիվանում են և չեն կարող չակտիվանալ կուլակը,
նեպմանը, այն տարրերը, վորոնք Անդրկովկասի պայ-
մաններում խողովակ են դառնում Դաշնակցութեան
աղդեցութեան համար: Կարող ենք արդյոք պնդել, վոր
մանր-բուրժուական միջավայրը ի վիճակի յե այսոր
չեզոքացնելու միանգամից այս աղդեցութիւնը: Վոչ,
ի հարկե: Մանր բուրժուազիան դեռ չի յենթարկվել
լիակատար սոցիալ-տնտեսական կերպարանափոխու-
թեան: Նրա կերպարանափոխութեան պրոցեսը սկսված
ե, զարգանում ե, վիթխարի չափեր ընդունում: Բայց
այդ պրոցեսը չի ավարտված, և վոր կարեւորն ե, ըն-
թանում ե հակասական ուղիներով: Միայն սոցիալիս-
տական շինարարութեան ավարտն ե, վոր կարող ե
արմատախիլ անել մանր-բուրժուական սեփականու-
թիւնը, մանր-բուրժուական տնտեսութիւնը, մանր
արտադրութիւնը, այն, վոր «կապիտալիզմ ե ծնում
յուրաքանչյուր ուր, յուրաքանչյուր ժամ, տարերա-
յին կերպով, մասսայորեն»: Վորչափ տակաւին մեզ
չի հաջողվել սոցիալիստական տնտեսութեան ցան-
ցի մեջ առնել կամ նրա ուղենիշ աղդեցութեանը յեն-
թարկել մանր-գյուղացիական բոլոր տնտեսութիւննե-
րը կամ այդ տնտեսութիւններին բոլոր ճյուղերը՝ դրանց
մի մասը ընթանում ե կապիտալիստական եվոլյուցիա-

յի հոգնով: Այս նշանակում է, վոր նացիոնալիստական մտայնությունը՝ հենակետ փնտրելով իրեն համար գյուղում և քաղաքում՝ կարող է հող գտնել կապիտալիստական եվոլյուցիայի ուղին բռնած մանր-բուրժուական առանձին շերտերի ու տարրերի մեջ:

Վերը նշած սմենովելսովյան տարրերից զատ կովկասահայ մանր-բուրժուական միջավայրում հակահեղափոխական, բուրժուական-նացիոնալիստական ազդեցության շոշափուկներ են հանդիսանում այսոր՝ սպեցիֆիկմը, հնչակիկմը, մենշևիկմը, տրոցկիկմը և այլն: Դաշնակցության և նրա իդեոլոգիայի վտանգավորությունը ներկա դեպքում մենք պետք է կշռենք հաշվի առնելով մանր-բուրժուական միջավայրի հետ նրա ունեցած վաղեմի կապերը, այդ միջավայրում նրա ցանած մտայնության հին արմատները: Այս կապերի, այս արմատների անտեսումը կարող է միայն թերագնահատել Դաշնակցության վտանգավորությունը մեր պայքարի ներքին ֆրոնտի վրա, մեր թիկունքում, վորտեղ մեր կռիվը կենտրոնանում է մանր-բուրժուական տարրերի, նրա բուրժուական-նացիոնալիստական վերապրումների դեմ: Դաշնակցության մանր-բուրժուական ծագման, նրա մանր-բուրժուական անցյալի անգիտացումը որեկտիվորեն ոեայ այս վտանգն է պարունակում իր մեջ:

Հայաստանի պայմաններում, վորտեղ կովկասահայ խոշոր առևտրա-արդյունաբերական բուրժուազիան չեթողել իր հետևից ընդարձակ ձեռնարկներ, մեծ ֆարքիկներ ու գործարաններ՝ Դաշնակցությունը վտանգավոր է մեզ համար վոչ միայն այն պատճառով, վոր նա պաշտպանում է այսոր այդ բուրժուազիայի անմիջական շահերը, այլ և այն, վոր նա հին ար-

մատներ ունի Հայաստանի մանր-բուրժուական միջավայրում: Այդ արմատները պետք է կտրել, վոչնչացնել Դաշնակցության և նրա ուղեկիցների դեմ մեր վարած պայքարի բոլոր վճռական մեթոդներով: Ահա այն գլխավոր, այն գործնական յեզրակացությունը, վոր բղխում է Դաշնակցության անցյալի մասին իսպաշտպանած տեսակետից՝ մեր ներկա քաղաքականության վերաբերմամբ: Շատ բան չեր պահանջվում այսօր հասկանալու համար: Լինել միայն հստակ միտք և բարի կամեցողություն:

Post scriptum

Իմ պատասխանը ընկ. Վանանյանին գրված եր արդեն, յերբ կարդացի ընկ. ընկ. Մարենցի և Գ. Բալաշյանի գրվածքները նույն նյութի մասին (Տես. Մարենց, «Հայկական սմենովեխականության դեմքը» բրոշյուրը. Յերևան, 1928 թ. և Գ. Բալաշյան «Իդեոլոգիան պայքարի խնդիրները» հոդվածը. «Լենինյան ուղի», 1928 թ., № 3—4):

Կանգ առնել հատկապես այդ գրվածքների վրա չարժե: Այստեղ ևս նույն շփոթն է մանր բուրժուազիայի և մանր-բուրժուական կուսակցության հարաբերությունների մասին: Նույն «չեղրակացությունը», վոր իբր յես «դատապարտում» եմ բալլերիզմի անխնա կռիվը Դաշնակցության դեմ, քարոզում եմ «քաղաքական դաշինք նրա հետ և այլն»):

Մի տեղ յես գրել եմ, վոր «հայ կապիտալիստական բուրժուական, իր ներքին անդորրը խանգարող հեղափոխական գործոն եր համարում յերբեմն անգամ դաշնակցականներին»: Յեվ ասա պատրաստ ե փութկոտ «մերկացումն» այն մասին, վոր ուրեմն, յես անում եմ «բայլերիկի համար անթույլատրելի մի յեղրակացություն» — «հեղափոխական գործոնի» պատվով վոր կոչում են տալիս Դաշնակցության...*):

Պարզ է՝ գրական մանկություն հետքերից չազատադրված պատանիների հափշտակությունը՝ իմ «քննադատները» կամենում են անպատճառ, ինչ գնով ել չլինի, «հերքած» լինել ինձ... Դուվելի յեռանդ, մանավանդ, յեթե տրամադիր լինենք համաձայնվելու վո-

*) Տես. Մարենց, եջ 46.

** Տես. Բալաշյան, եջ 57 և հետ.

մանց արտահայտած կոնֆուզ այն կարծիքին, թե ինքնաքննադատությունը դարձել է կամ պետք է դառնա ներկայիս մեր մամուլի «հիմնական նպատակներից (sic!) մեկը»*):

Ինքնանպատակ դարձած քննադատությունը — մանավանդ վորպես գրական վարժություն միջոց — կարող է յերբեմն նաև անփնաս զբաղմունքի վերածվել: Բայց չի կարող մտահոգության առիթ չդառնալ նա այն վայրկյանից, յերբ գրչի վարժությունը ընկերանում է հակումների հետ, վորոնց աղբյուրը դժվար է արդեն գրական անփորձությունը համարել: Մտահոգության այսպիսի առիթներից մեկը կարող է լինել հատկապես ընկ. Մարենցի և ընկ. Բալաշյանի նոր մի հայտնությունը: Այն, վոր իբր յես «ապագասակարգային» եմ համարում Դաշնակցության իդեոլոգիան և վոր դրանից հենց բխում է այն միտքը, թե դաշնակցական իդեոլոգիան վոչինչ վտանգ չի սպառնում մեզ, վոր, հետևաբար, չպետք է պայքարել դաշնակցական իդեոլոգիայի դեմ և այլն:

Ի՞նչի մասին է խոսքը:

Համեմատելով Դաշնակցությունն ու վրաց մենշևիզմը՝ յես մատնանշել եմ նրանց հին իդեոլոգիաների մեջ յեղած ձևական մի տարբերությունը: Վրաց մանր բուրժուազիայի առանձնահատուկ դիրքը — գրել եմ յես «հեղափոխականություն», դասակարգայնություն և միջադպրոցայնություն վորոշ կերպարանք եր տալիս մի ժամանակ վրաց մանր բուրժուազիայի ազգային կուսակցությունը և իր իդեոլոգիային**): Արահակառակ յես վեր

*) Տես «Մոսկովյան Հայաստան», 1928 թ. № 122, Ա. Յեսպանի հոդվածը:

**) «Նորք», 1928 թ., գիրք առաջին, եջ 165:

եմ հանել կովկասահայ մանր-բուրժուական իդեոլոգիայի ապադասակարգայնական կերպարանքը:

«Հանձին դաշնակցության—գրել եմ յես—այն (այսինքն մանր բուրժուազիան) սկզբունքային խնդիր չէ հարուցանում սեփական շահերի մասին: Իր ազատագրման առանձնահատուկ պայմանները այն ներկայացնում են վորպես «ազգի» ազատագրման ընդհանուր պայմաններ: Վորպես դասակարգային կուսակցություն՝ կովկասահայ մանր բուրժուազիայի շահերի արտահայտիչը լինելով՝ Դաշնակցությունը դասակարգայնական չէր իր իդեոլոգիայով: Նրա իդեոլոգիան ձևակերպվեց վորպես ապադասակարգային նացիոնալիզմ: Այդ նացիոնալիզմը բխում էր այնուամենայնիվ կովկասահայ մանր բուրժուազիայի, նրա վորոշ հատվածի, ուրույն դրությունից»*):

Իմ «Քննադատները» շտապել են այս տողերի միտքը այնպես ներկայացնել ընթերցողին, թե իբր յես ժխտում եմ դաշնակցական իդեոլոգիայի դասակարգային ելությունը:

Ընդհանուր կապակցության մեջ՝ իմ վերի տողերի միտքը պարզ է միանգամայն: Դաշնակցության իդեոլոգիան դասակարգային էր իր ծագումով, իր սոցիալ-քաղաքական նշանակութամբ, բայց դասակարգայնական չէր իր արդումնատացիայով, իր քաղաքական ֆրադիոլոգիայով: Պնդել հակառակը, հայտարարել թե դաշնակցական իդեոլոգիան դասակարգայնական էր նաև իր առաջադրած գաղափարների կապակցման սիստեմով, իր արդումնատացիայով, կը-

*) Նույն տեղ, էջ 169:

նշանակել ժխտել նրա ազգայնականությունը, այն իրողությունը, վոր դաշնակցականները յերդվում էին շարունակ «ազգի» և «հայրենիքի» անունով, շղարշում էին շարունակ դասակարգային ներհակությունների փաստը, չէին հայտարարում իրանց վորևե դասակարգի ներկայացուցիչ և այլն: Այս վարմունքի մեջ արտառոց վոչինչ չկար: Նացիոնալիզմը սովորաբար թագցնում է իր դասակարգային կերպարանքը, զրահավորվում ապադասակարգայնության վահանով: Բուրժուազիայի—խոշոր թե մանր—դասակարգային ազատագրումը, այն հրամցնում է վորպես «ազգի» ազատագրում:

Ի վերջո նույնիսկ կարիք չկա, վոր մանր բուրժուազիան կամ նրա քաղաքական ներկայացուցիչները ձգտեյին զիտակցորեն իրանց դասակարգային շահերը կենսագործելու: Յերբ գրի եյի առնում ընկերներին խրտնացնող իմ տողերը, հիշողությանս մեջ ցցված էր Մարքսի՝ «Լյուի Բոնապարտի Բրյումերի 18-ը» գրվածքի հետակա միտքը:

«Չպետք է ունենալ սահմանափակ այն պատկերացումը, վոր մանր բուրժուազիան սկզբունքորեն է ձգտում անցկացնելու իր դասակարգային շահերը: Ընդհակառակը, նա ունի այն հավատը, թե իր ազատագրման առանձնահատուկ պայմանները ընդհանուր պայմաններն են, վորոնց շնորհիվ միայն կարող է ազատագրվել նորադոյն հասարակությունը և խուսափել դասակարգային կռվից: Նույնպես չպետք է կարծել, վոր դեմոկրատիայի բոլոր ներկայացուցիչները խանութպաններ են կամ խանութպանների ներկայացուցիչներ: Իրանց կրթությամբ և անձնական

դրությամբ նրանք կարող են հեռու լինել դրանցից, ինչպես յերկինքը յերկրից: Մանր բուրժուալի ներկայացուցիչ և դարձնում նրանց այն հանգամանքը, վոր նրանց միտքը անկարող և անցնել այն սահմաններից դեմը, վորոնցից դեմը չի անցնում մանր բուրժուականների կյանքը, ուստի և տեսականորեն նրանք հանգում են նույն այն խնդիրներին ու վորոշումներին, վորոնց գործնականապես հանգում և մանր բուրժուական իր նյութական շահի և հասարակական գիրքի բերումով: Այս և առհասարակ վորևե դասակարգի քաղաքական և գրական ներկայացուցիչների առնչությունը այն դասակարգի հետ, վորին նրանք ներկայացնում են»*):

Այս միտքը Մարքսը կոնկրետացնում և ֆրանսիական «դեմոկրատների» որինակով:

«Դեմոկրատը ներկայացնելով մանր բուրժուազիան, ասել և մի միջանկյալ դասակարգ, վորի մեջ փոխադարձաբար բթանում են յերկու դասակարգերի շահերը, յերեակայում և, վոր ինքն առհասարակ վեր և կանգնած դասակարգային անտոգոնիզմից: Դեմոկրատները յենթադրում են, վոր իրանց դիմաց կանգնած և մի արտոնյալ դասակարգ, բայց վոր բնակչության մնացած մասի հետ իրանք ժողովուրդ են կազմում: Իրանց պաշտպանածը ժողովրդական իրավունքն և, իրանց շահագրգռողը—ժողովրդական շահը»**):

*) Karl Marx, «Der achtzehnte Brumaire des Louis Bonaparte». Hamburg, 1885. էջ 36.

**) Նույն տեղ, էջ 39.

Նույն այս միտքը հանդիպում ենք նաև Լենինի գրվածքներում.

«Մանր բուրժուական—գրում և Լենինը,—...պատրանք և սնում այն մասին, վոր իբր դեմոկրատական հանրապետությունը նշանակում և «զուտ» դեմոկրատիա», «ազատ ժողովրդական պետություն», արտադասակարգային կամ գերդասակարգային ժողովրդապետություն համաժողովրդական կամքի զուտ արտահայտություն և այլն և այլն: Մանր-բուրժուական դեմոկրատիայի այս նախապաշարունակների ամբողջությունը պայմանավորված և նրանով, վոր նա հեռու չի կանգնած դասակարգային կռիվից, բորսայից, իսկական «քաղաքականությունից»):

Թվում և, վոր այս մեջբերումներից հետո, նորեկ իմ քննադատները պիտի քաջություն ունենան մեղադրանք ու կշտամբանք ուղղելու նաև Մարքսին և Լենինին: Չե՞ վոր Դաշնակցության «ապադասակարգային» իդեոլոգիայի մասին իմ գրածը գրեթե բառացիորեն վերարտադրում և նրանց հայացքը մանր-բուրժուական դեմոկրատիայի՝ «արտադասակարգային», «գերդասակարգային», «դասակարգային անտոգոնիզմից վեր կանգնած» նախապաշարունակների մասին:

Իմ գրվածքում Դաշնակցության իդեոլոգիայի դասակարգային ծագման և աղբյուրական (ապադասակարգային) ձևակերպման հանգամանքը ընդգծված և ի միջի այլոց նրանով, վոր յես ժխտում եմ Դաշնակցության իդեոլոգիայի «դասակարգային և և», բայց վոչ նրա «դասակարգային» կերպարանքը: Այս տերմինների մեջ գոյություն ունի իմաստի նույնչափ մեծ տարբերություն, վորչափ, որինակ, «ազա-

*) Ленин, XV т., стр. 562.

յին» և «ազգայնական» տերմինների մեջ: Անկասկած, այդ զգացել կամ գիտակցել են ինձ «առարկող» ընկերները: Ուստի և նրանք, ներկայացնելով ընթերցողին իբր թե իմ մտքերը մի կողմից պոկում են ընդհանուր կապակցությունից իմ գրածը, մյուս կողմից վերագրում ինձ տողեր, վորտեղ նրանք «դասակարգայնական» բառը ջնջում են խնամքով ու շնորհակալությամբ «դասակարգային» արտահայտությունը:

«Դաշնակցությունը դասակարգային չէր իր իդեոլոգիայով: Նրա իդեոլոգիան ձևակերպվեց վորպես ապադասակարգային նացիոնալիզմ»: Ահա ընկ. Մարենցի «մեջբերումը»^{*)}:


Նույն «մեջբերումը», փոքր ինչ ավելի ընդարձակ հանդիպում ենք նաև ընկ. Քալաշյանի հոդվածում.—

«Վորպես դասակարգային կուսակցություն՝ կովկասահայ մանր բուրժուազիայի շահերի արտահայտիչը լինելով՝ Դաշնակցությունը դասակարգային չէր իր իդեոլոգիայով: Նրա իդեոլոգիան ձևակերպվեց վորպես ապադասակարգային նացիոնալիզմ»^{**)}:


Կարող ե պատահել, վոր իմ տողերի ֆալսիֆիկացիան կատարել ե միայն ըննադատներից մեկը, մինչդեռ մյուսը միայն գրական պլագիատ ե կատարել սրանից: Վորտեղ ե այդ դեպքում վերջանում ֆալսիֆիկացիան, և վորտեղ սկսվում պլագիատը—այդ հարցը չե հեհեաքրքրում ինձ: Ինձ հայտնի յե միայն այն, վոր թե մեկ և թե մյուս վարմունքը դուրս ե գալիս քննադատողի կոմպետենցիայից և թևակոխում այն ասպարեզը, վորի վերաբերմամբ վճռական խոսքը քրեական օրենսգրքին ե պատկանում:

^{*)} Տես: Մարենց, էջ 43.

^{**)} Տես Քալաշյանի հոդվածը, «Լենինյան ուղի» №3—4, էջ 64.



<< Ազգային գրադարան



NL0196311

14378

Lat 89

БИБЛИОТЕКА
ИНСТИТУ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

904

ин 81

904 2